ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2009Թ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը ներկայացնում է ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման (ՀԳՄԾ) ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության տնային տնտեսություններում և մասնավոր ձեռնարկություններում կոռուպցիայի վերաբերյալ անցկացված ընտրանքային հետազոտության հիմնական արդյունքները: Տնային տնտեսություններում հետազոտության դաշտային աշխատանքները կատարվել են 2009թ. հոկտեմբերին, իսկ մասնավոր ձեռնարկություններում՝ 2009թ. դեկտեմբերին և 2010թ. հունվարին: Համեմատության համար զեկույցում օգտագործվել են նաև կոռուպցիայի մասին տնային տնտեսություններում 2008թ. անցկացված հետազոտության արդյունքները:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Հայաստանցիների համար վերջին երկու տարում Հայաստանի առջև ծառացած առավել կարևոր հիմնախնդիրների ցանկը չի փոխվել. առավել մտահոգիչ են գործազրկությունը, աղքատությունը, ընդհանուր բնույթի տնտեսական խնդիրները, սղաճն ու բարձր գները:
- Կոռուպցիան իր կարևորությամբ այդ հիմնախնդիրների շարքում զբաղեցնում է հինգերորդ տեղը և ավելի շատ է մտահոգում, քան արտագաղթը: 2009թ. հարցվածների 84 տոկոսը կոռուպցիան ընկալում է որպես Հայաստանի համար լուրջ խնդիր:
- Հայաստանցիներն ավելի կոռումպացված են համարում բարձրաստիճան պաշտոնյաներին, քան միջին կամ ստորին օղակի ծառայողներին:
- Գրեթե չկոռումպացված են համարվում կոմունալ և համայնքային ծառայությունների, կապի ոլորտը: Առավել կոռումպացված են համարվում ընտրական, դատական և իրավական համակարգերը:
- Ամեն հինգերորդ հարցված պատրաստ է թե՛ տալ, և թե՛ վերցնել կաշառք:
- 2009թ. հարցվածների տասից չորսն անընդունելի են համարել թե՛ կաշառք ընդունելը, և թե՛ տալը: Սակայն, նույնիսկ նրանք կոռուպցիայի դեմ պայքարելու հիմնական եղանակը համարում են կոռուպցիոն հարաբերությունների մեջ չներքաշվելը:
- Հարցվածների ծանրակշիռ մասը գտնում է, որ կոռուպցիան հաղթահարելու գործում անձամբ որևէ բան անել չի կարող: Որպես կոռուպցիայի դեմ անձնական պայքարի առավել ընդունելի տարբերակ հարցվածները նշել են կոռուպցիոն հարաբերություններից ձեռնպահ մնալը:
- Հայաստանցիները դիմում են կոռուպցիոն գործարքների հիմնականում այն պատճառով, որ չեն տեսնում սեփական խնդիրների լուծման այլընտրանքային ճանապարհներ, իսկ կոռուպցիոն փաստերի վերաբերյալ չեն տեղեկացնում իրավասու մարմիններին՝ դա համարելով հասարակայնորեն մերժելի:
- 2009թ. կոռուպցիան բնական երևույթ համարողների և այդ կարծիքը մերժողների հարաբերակցությունը կազմել է 59 տոկոս և 38 տոկոս: 2008թ. հարցվածների միայն կեսն

(51 տոկոսը) էր համաձայնել այն պնդման հետ, որ կոռուպցիան բնական երևույթ է, մինչդեռ 44 տոկոսը անհամաձայնություն էր հայտնել:

- Կոռուպցիոն վարքի համար (անկախ դերակատարումից) պատժվելու վախը որպես դրանից զերծ մնալու պատճառ նշել են հարցվածների մոտ 10 տոկոսը միայն:
- Հակակոռուպցիոն պայքարով զբաղվող ՀԿ-ների մասին հանրությունը լավ իրազեկ չէ: ՀԿ-ները ոչ միայն հայտնի չեն, այլ նաև չեն վայելում բնակչության վստահությունը: Կոռուպցիային առնչվող բողոքների դեպքում հարցվածների մեծամասնությունը չի պատրաստվում դիմել ՀԿ-ներին, իսկ դիմելու դեպքում՝ հիմնականում ակնկալում է տեղեկատվական բնույթի օժանդակություն:
- Հարցվածների 25 տոկոսն են տեղյակ ՀՀ կառավարության հակակոռուպցիոն միջոցառումների և նախաձեռնությունների մասին:
- Կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր են ծառայում ավելի շուտ անհատական սոցիալական ցանցերը, քան ԶԼՄ-ները կամ սեփական փորձը:

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Հայաստանում 2009թ. դեկտեմբեր և 2010թ. հունվար ամիսներին մասնավոր ձեռնարկություններում հարցվածների յուրաքանչյուր չորրորդը (24 տոկոսը) կոռուպցիան համարել է Հայաստանում առկա ամենակարևոր հիմնախնդիրը. ըստ կարևորության այն հաջորդել է գործազրկությանը (45 տոկոս) և ընդհանուր տնտեսական խնդիրներին (31 տոկոս): Հարցվածների 92 տոկոսը կոռուպցիան համարել է բավականին կամ շատ լուրջ խնդիր:
- Ձեռնարկություններում հարցվածների գրեթե կեսը որևէ փոփոխություն չի տեսնում կոռուպցիայի մակարդակի մեջ նախորդ տարվա համեմատ: Նրանց գնահատմամբ, կոռուպցիայի թե՛ ընդհանուր մակարդակը, թե՛ հաճախականությունը ու տրվող/պահանջվող կաշառքի գումարների մեծությունը նախորդ տարվա համեմատ մնացել են անփոփոխ:
- Բիզնեսի զարգացմանը Հայաստանում առավելապես խոչընդոտում են ոչ մրցակցային հարաբերությունները (61 տոկոս) և կոռուպցիան (50 տոկոս):
- Ձեռնարկություններում հարցվածների կարծիքով ևս կոռուպցիան առավել տարածված է բարձրաստիճան պետական պաշտոնյաների շրջանում:
- Կոռուպցիոն առիթի դեպքում հարցվածների 67 տոկոսը պատրաստակամ է կաշառք տալ:
- Հարցվածների 38 տոկոսը գտնում է, որ ոչինչ չի կարող անել կոռուպցիայի դեմ պայքարի գործում: Կոռուպցիոն դրսևորումները հաղթահարելու նպատակով իրենց եկամտից հատկացումներ անելու պատրաստակամություն չունեն հարցվածների մեկ երրորդը, մինչդեռ մեկ քառորդը կզոհաբերի եկամտի մինչև 5 տոկոսը:
- Հարցմանը մասնակցածների 71 տոկոսը նշել է, որ բյուրոկրատական քաշքշուկների վրա ծախսվող ժամանակի մեծ մասը բաժին է ընկնում հարկային մարմիններին:
- Դատական համակարգը ընկալվում է որպես խիստ կողմնակալ հօգուտ հարուստների և ազդեցիկ խմբերի:

- Ընկերության առջև ծառացած նշանակալի խնդիրները լուծելիս գործարարների 47 տոկոսը նախընտրել է ընկերների և գործընկերների միջնորդությունը:
- Հակակոռուպցիոն պայքարով զբաղվող հասարակական կազմակերպությունների մասին տեղեկացվածությունը հարցմանը մասնակցած գործարարների շրջանում ցածր է: Ընդամենը 12 տոկոսն են տեղյակ եղել այդպիսի կազմակերպությունների մասին. դրանցից առավել հաճախ նշվել են Թրանսփերենսի ինտերնեյշնլը, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան և Աքիլես հասարակական կազմակերպությունը:
- ՀՀ կառավարության հակակոռուպցիոն միջոցառումների մասին տեղեկացված են եղել հարցվածների մոտ 50 տոկոսը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 1
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 2
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 6

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 8

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ..... 8
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ 11
ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՓՈՐՁԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ..... 20
ԻՐԱՁԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 27
ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՍԵԿՈՍԵՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ..... 32
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 34

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 36

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ..... 36
ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԵՎ ԴՐԱ ՏԱՐԲԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ..... 39
ՏԵՍԱԿԵՏՆԵՐ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 52
ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԱ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 55
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ 57
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 60

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԸ.....61
ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2008թ. ԵՎ 2009թ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ.....99
ՀԱՎԵԼՎԱԾ Գ. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2009թ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽԱՉԱՁԵՎ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ.....177
ՀԱՎԵԼՎԱԾ Դ. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ.....197

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Կոռուպցիան՝ վստահված դիրքի չարաշահումը անձնական շահի համար, կարևորագույն հիմնախնդիր է շատ հասարակություններում: Հայաստանը, դժբախտաբար, բացառություն չէ: Կոռուպցիան վնասում է արդար շուկայական մրցակցությանը և կասեցնում տնտեսական, սոցիալական ու քաղաքական զարգացումը: Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը, մասնավոր հատվածը և ԶԼՄ-ները պետք է միավորեն իրենց ջանքերը: Ավելին, այս պայքարի նախապայմանը հասարակության՝ կոռուպցիայի ընկալման հուսալի ու համընդհանուր գնահատումն է: Հայաստանի տնային տնտեսություններում և մասնավոր ձեռնարկություններում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությունները, որոնք իրականացվել են ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի կողմից՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան ծրագրի միջոցով, տրամադրում են այդ խիստ կարևոր տեղեկատվությունը:

Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրով նախատեսվում է բնակչության և գործարարների շրջանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտությունների անցկացում: Նման հետազոտությունների միջոցով չափվում են քաղաքացիների և գործարար ղեկավարների՝ կոռուպցիայի հանդեպ վերաբերմունքը և դատապարտումը, ինչպես նաև հակակոռուպցիոն պայքարի գործիքների վերաբերյալ նրանց գիտելիքները: Հետազոտություններով ստացված հարուստ տվյալները խիստ կարևոր են կոռուպցիայի չափը և աղբյուրները ախտորոշելու, հակակոռուպցիոն բարեփոխումների գերակայությունները սահմանելու, ինչպես նաև քաղաքականության երկխոսություն ձևավորելու համար:

Որպես Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի նախագահ՝ ես քաջալերում եմ կոռուպցիայի դեմ պայքարում բոլոր ընդգրկվածներին օգտագործել այս զեկույցի հարուստ տվյալները՝ էլ ավելի խորը հետազոտելու Հայաստանում կոռուպցիայի առանձնահատկությունները և կոռուպցիայի դեմ պայքարի ամենաարդյունավետ մեթոդները:

Գևորգ Կոստանյան,

Հակակոռուպցիոն ռազմավարության

իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի նախագահ,

Հայաստանի Հանրապետության Նախագահի օգնական

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիան իր տարբեր դրսևորումներով ազդում է մարդկանց կյանքի վրա, հետևաբար, հայ հասարակության բազմաթիվ հաստատությունների համար կոռուպցիայի դեմ պայքարը պետք է առաջնային լուծման խնդիր լինի: Կոռուպցիայի ընկալման, դրա մակարդակի, մատուցվող հանրային ծառայությունների որակի գնահատման և հասարակական կյանքի այլ դրսևորումների մասին տեղեկությունների կարևոր աղբյուր են ծառայում հանրային կարծիքի հետազոտությունները: Դրանք օժանդակում են կառավարությանը, քաղաքացիական հասարակությանը և մասնավոր հատվածին հակակոռուպցիոն քաղաքականության ու ծրագրերի մշակման և իրականացման գործում:

ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) հովանու ներքո, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) ծրագիրը Հայաստանում անցկացրել է կոռուպցիայի վերաբերյալ հանրային և գործարարների կարծիքի ընտրանքային հետազոտություններ: Հանրային կարծիքի երկու հետազոտություններից առաջինն իրականացվել է 2008թ. աշնանը՝ Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) հետ համատեղ, իսկ երկրորդը՝ 2009թ. աշնանը՝ ինքնուրույն: Երկուսն էլ անցկացվել են Հայաստանի բոլոր մարզերի չափահասների (18 և ավելի տարեկան) շրջանում: Վերջին՝ 2009թ. դեկտեմբերին և 2010թ. հունվարին անցկացված երրորդ հետազոտությամբ հարցվել են 400 մասնավոր ձեռնարկություններ ներկայացնող գործարարներ:

2008թ. հարցման արդյունքները տպագրվել են ՀԳՄԾ-ի կողմից, իսկ ՀՌԿԿ-ն մի շարք շնորհանդեսների ընթացքում դրանք ներկայացրել է պետական ծառայողների, հասարակագետ հետազոտողների, հանրային լրատվամիջոցների և ՀԿ ներկայացուցիչների քննարկմանը: Ուստի, այս զեկույցը ոչ միայն ՀՌԿԿ անձնակազմի և ազգային փորձագետների մեթոդաբանական և վերլուծական աշխատանքի պտուղն է, այլ նաև այդ քննարկումների ընթացքում արված մեկնաբանությունների և առաջարկությունների արդյունքը:

Զեկույցը թեև հիմնականում ներկայացնում է 2009 թվականին տնային տնտեսություններում և մասնավոր ընկերություններում անցկացված հետազոտության արդյունքները, որոշ համեմատություններ են արվել նաև 2008թ. տնային տնտեսությունների հետազոտության տվյալների հետ:

Զեկույցի առաջին բաժինը ներկայացնում է տնային տնտեսությունների հետազոտության հիմնական արդյունքները: Երկրորդ բաժինն ամփոփում է գործարարների հետազոտության արդյունքները՝ երբեմն համեմատելով դրանք տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների հետ:

Հավելվածներում զետեղված է ավելի մանրամասն տեղեկատվություն հարցաշարերի և պատասխանների վերաբերյալ: Հարկ է նշել, որ այս զեկույցը միայն մասամբ է արտացոլում հետազոտությամբ ստացված հարուստ տեղեկատվությունը: Առավել հետաքրքրվածները կարող են հետազոտության բոլոր նյութերը, ներառյալ տվյալների բազաները, գտնել ՀՌԿԿ-Հայաստանի կայքում[1]: Առաջնային տվյալների հետ աշխատանքն ավելի խորը՝ սույն զեկույցի շրջանակներից հեռուն գնացող վերլուծությունների հնարավորություն կտա:

[1] ՀՌԿԿ-Հայաստանի կայքի հասցեն է. www.crrc.am:

ՀՌԿԿ-Հայաստանի անձնակազմն իր շնորհակալությունն է հղում բոլոր նրանց, ովքեր ավանդ են բերել այս զեկույցի պատրաստմանը՝ Բագրատ Հարությունյանին, Գայանե Ղուկասյանին, Ռուբեն Եգանյանին, Թերիզ Սվենսոնին, Յեսսե Թաթումին, Էլիզա Փերրիին, Հանս Գութբրոդին, ինչպես նաև նվիրումով աշխատած խմբավարներին, զրուցավարներին և կամավորականներին: Հուսով ենք, որ այս զեկույցը բազմաթիվ ընթերցողներ կունենա և կնպաստի հայաստանյան իրականության ավելի ճիշտ ընկալմանն ու կոռուպցիայի դեմ պայքարում տեղեկացված որոշումների կայացմանը:

Հուշագիր՝ գծապատկերների, աղյուսակների և տվյալների մասին.

Բոլոր գծապատկերներում և աղյուսակներում, եթե այլ նշում չկա, բերված են բոլոր վավեր պատասխաններն՝ արտահայտված տոկոսներով: Այն դեպքերում, երբ հարցվածները հնարավորություն են ունեցել տալ մեկից ավելի պատասխան, տոկոսների հանրագումարը տարբերվում է հարյուրից, ինչը հաշվարկի առանձնահատկություն է, ոչ թե թվաբանական սխալ: Վերլուծության մեջ ներկայացված թվերի և գծապատկերներում կամ աղյուսակներում տրված թվերի միջև կարող են լինել աննշան տարբերություններ, ինչը թվերի կլորացման հետևանք է: Որոշ դեպքերում, շարադրանքը կամ պատկերներն ավելի հստակ ներկայացնելու նպատակով, փոքրարժեք թվերն անտեսվել են:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Տնային տնտեսություններում հարցվածների մեծ մասը բացասական կարծիքի է Հայաստանի ընդհանուր և տնտեսական իրավիճակի մասին: 2009 թվականին այդ իրավիճակը դրական համարողների բաժինը 2008թ. համեմատ նվազել է: Հարցվածների կեսից ավելին նաև ասել է, որ հետաքրքրված չէ քաղաքականության և կառավարման համակարգի խնդիրներով: Այս խնդիրների նկատմամբ հետաքրքրությունն առավել սակավ է ոչ երևանաբնակ քաղաքային բնակիչների, կանանց, ինչպես նաև ցածր կրթամակարդակ ունեցողների շրջանում:

Հայաստանի գլխավոր հիմնախնդիրների վերաբերյալ 2009թ. հարցվածների կարծիքը գրեթե չի տարբերվում 2008թ. արդյունքներից: Հիմնականում մատնանշվել են տնտեսական բնույթի խնդիրները, մասնավորապես՝ գործազրկությունը և աղքատությունը: Կոռուպցիան ըստ կարևորության զբաղեցնում է 5-րդ տեղը. ըստ որում, կոռուպցիայի հիմնախնդրով առավել մտահոգ են բարձր կրթամակարդակ ունեցողները և երևանաբնակները:

ԵՐԿՐՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄՏԱՀՈԳԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Հարցվածների մեծ մասը դժգոհ է երկրում տիրող ընդհանուր իրավիճակից: 2009թ.-ին զգալիորեն աճել է այն հայաստանցիների բաժինը, ովքեր ավելի շուտ կամ բոլորովին բավարարված չեն երկրի ընդհանուր իրավիճակից. եթե 2008թ. նման կարծիքի էին բոլոր հարցվածների 61 տոկոսը, ապա 2009թ.-ին՝ մոտ 73 տոկոսը: Գրեթե նույնն է մնացել միանգամայն բավարարվածների բաժինը (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Բավարարվածությունը Հայաստանի ընդհանուր իրավիճակով



Որոշակի կապ գոյություն ունի կրթամակարդակի և ընդհանուր իրավիճակով բավարարվածության միջև. կրթամակարդակի նվազման հետ մեկտեղ նվազում է բավարարվածության զգացումը: Այսպես, իրավիճակով բոլորովին բավարարված չեն թերի միջնակարգ կամ ավելի ցածր կրթամակարդակ ունեցողների 47 տոկոսը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների միայն 26 տոկոսը: Երկրի ընդհանուր իրավիճակի գնահատականի

տեսանկյունից էական տարբերություններ չկան կանանց և տղամարդկանց, ինչպես նաև երևանաբնակների, այլ քաղաքային վայրերի բնակիչների և գյուղաբնակների միջև:

Քաղաքականության և կառավարման համակարգի խնդիրներով հետաքրքրված անձանց բաժինը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ: 2009թ.-ին նշված ոլորտի նկատմամբ շատ կամ որոշակի հետաքրքրություն են ունեցել հարցվածների 42 տոկոսը (Գծապատկեր 2): Այս ոլորտի նկատմամբ հետաքրքրության սակավությունն առավել ընդգծված է ոչ երևանաբնակ քաղաքային բնակիչների (33 տոկոս) և գյուղաբնակների (32 տոկոս) մոտ, մինչդեռ երևանցիների շրջանում քաղաքականության և կառավարման համակարգի նկատմամբ անտարբերների տեսակարար կշիռը նկատելիորեն ավելի քիչ է (21 տոկոս): Ուսումնասիրության արդյունքները նաև փաստում են, որ քաղաքականությունը և պետական կառավարման խնդիրներն ավանդաբար մնում են տղամարդկանց հետաքրքրությունների շրջանակում. եթե տղամարդկանց շուրջ 49 տոկոսն է որոշակիորեն հետաքրքրված դրանցով, ապա կանանց՝ ընդամենը 39 տոկոսը: Ավելին, կապ կա նաև կրթամակարդակի և քաղաքականության ու պետական կառավարման խնդիրներով հետաքրքրվածության միջև. միջնակարգ կրթություն ունեցողների 44 տոկոսն ընդհանրապես չի հետաքրքրվում նշված հարցերով, իսկ բարձրագույն և ավելի կրթություն ունեցողների շրջանում այդպիսիք ընդամենը 17 տոկոս են կազմում:

Գծապատկեր 2. Հետաքրքրվածությունը քաղաքականությամբ և պետական կառավարմամբ



2009թ.-ին երկրի տնտեսական վիճակը շատ վատ են գնահատել հարցվածների 23 տոկոսը, իսկ այն դրական են գնահատել հարցվածների միայն 6 տոկոսը: Առկա տնտեսական իրավիճակը գրեթե նույն կերպ էին գնահատել 2008թ. հարցվածները (Գծապատկեր 3):

Բնակավայրի տիպը և սեռը էական դեր չեն խաղում ընթացիկ տնտեսական իրավիճակի գնահատականներում, մինչդեռ ըստ կրթամակարդակների կրկին առկա են որոշակի տարբերություններ. այն շատ վատ են որակել թերի միջնակարգ կամ ավելի ցածր կրթամակարդակ ունեցողների 25 տոկոսը, մինչդեռ բարձրագույն և ավելի կրթություն ունեցողների՝ միայն 18 տոկոսը:

Գծապատկեր 3. Հայաստանի ներկա տնտեսական իրավիճակի գնահատականը



ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԵՆ

Հայաստանի գլխավոր հիմնախնդիրների առաջարկված ցանկից 2009թ. հարցվածներն առավել հաճախ մատնանշել են գործազրկությունը (65 տոկոս), աղքատությունը (30 տոկոս), ընդհանուր բնույթի տնտեսական խնդիրները (23 տոկոս), ինչպես նաև սղաճն ու բարձր գները (20 տոկոս)[2]: Նույն հարցին 2008թ. տրված պատասխանների թե՛ կազմը, և թե՛ կառուցվածքը մնացել են գրեթե անփոփոխ (Գծապատկեր 4):

Տնտեսությանը և դրան ուղղակիորեն առնչվող խնդիրները, թերևս, ավելի շատ են մտահոգում հայաստանցիներին, քան քաղաքական խնդիրները: Ինչպես 2008, այնպես էլ 2009 թվականին, Հայաստանի առջև ծառացած հիմնախնդիրների շարքում կոռուպցիան զբաղեցրել է 5-րդ տեղը. այն կարևորվել է պատասխանների 15 տոկոսի դեպքում: Նշենք, որ գլխավոր հիմնախնդիրների շարքում հենց կոռուպցիայի խնդրում է հնարավոր բարելավումը, քանի որ տնտեսական խնդիրները չեն կարող հեշտությամբ լուծվել՝ նույնիսկ քաղաքական կամքի և նպատակաուղղված քաղաքականության դեպքում: Ուստի, քաղաքական առումով այն առաջնահերթ կարևորություն ունի:

Գործազրկությունը և աղքատությունը որպես գլխավոր հիմնախնդիրներ նշողների բաժինն զգալիորեն ավելի բարձր է այլ քաղաքային բնակավայրերում և գյուղական բնակավայրերում, քան մայրաքաղաքում: Երևանցիներն ավելի շատ են մտահոգված կոռուպցիայի խնդրով (21 տոկոս), քան այլ քաղաքների բնակիչները (11 տոկոս) և գյուղաբնակները (13 տոկոս): 2009 թվականի և 2008 թվականի համար այս տվյալները գրեթե նույնական են եղել: Սակայն, հարցվողի կրթությունն էապես ազդում է կոռուպցիայի ընկալման վրա: Կոռուպցիոն երևույթների վտանգն ավելի սուր են զգում բարձրագույն կրթություն ունեցողները (նրանց 24 տոկոսն է նշել կոռուպցիան որպես խնդիր), քան թերի միջնակարգ և ավելի ցածր կրթամակարդակ ունեցողները (14 տոկոս):

---

[2] Այս հարցին պատասխանելիս հարցվողները կարող էին տալ մինչև երեք պատասխան, սակայն գերազանցապես տվել են երկու պատասխան:

Գծապատկեր 4. Հայաստանի առջև ծառացած առավել կարևոր խնդիրները (մինչև 3 պատասխանի հնարավորություն)



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Ինչպես 2008, այնպես էլ 2009 թվականին հարցվածների մեծամասնությունը կոռուպցիան համարել է շատ լուրջ հիմնախնդիր: Կոռուպցիայի դեմ պայքարի նկատմամբ վերաբերմունքը նախորդ տարվա համեմատ կարծես թե վատացել է. 2009 թվականին ավելի շատերն են այն առօրեական փաստ համարել, մինչդեռ ավելի քչերն են հնարավոր համարել դրա լիովին վերացումը կամ էական նվազեցումը: 2009թ. հարցվածների մեծամասնությունը վստահ է, որ կոռուպցիայի մակարդակը մնացել է նույնը կամ աճել է, մինչդեռ 2008թ. հարցվածների զգալի մասը կոռուպցիայի մակարդակը համարում էր անփոփոխ կամ նվազող:

Հարցվածների 65 տոկոսը նշել է, որ դատարանները և դատախազությունը «մեծապես» կամ «որոշ չափով» կոռումպացված են: Հաստատությունների ցանկում ամենասակավ կոռումպացված հաստատությունն է համարվել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Ընդհանուր առմամբ, հարցվածները կոռումպացվածության մեջ ավելի շատ կասկածում են բարձրաստիճան պաշտոնյաներին, և այս գնահատականները 2008թ. համեմատ նկատելիորեն խստացել են:

Հարցվածների երկու երրորդը հավատացած է, որ կոռուպցիան մեծապես կամ որոշ չափով բնորոշ է ընտրական գործընթացներին: Հայաստանի իրավապահ և ոստիկանության համակարգերը ևս համարվել են մեծապես կոռումպացված: Հարցվածներից շատերը կոռումպացված են համարում նաև առողջապահության և կրթության համակարգերը, հարկային

և մաքսային ծառայությունները: Ամենաքիչ կոռումպացված են համարվել կոմունալ-կենցաղային ծառայությունների և հեռահաղորդակցության ոլորտները:

ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՇԱՏ ԼՈՒՐՋ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ Է ՀԱՄԱՐՈՒՄ

Հայաստանի ամենալուրջ հիմնախնդիրների մասին ընդհանուր հարցից բացի, հարցվածները գնահատել են նաև թե որքան լուրջ է կոռուպցիայի հիմնախնդիրը: Այն Հայաստանում «շատ լուրջ» են համարել թե՛ 2008, և թե՛ 2009 թվականին հարցվածների մեծամասնությունը (Գծապատկեր 5): 2009թ. երևանցիները կոռուպցիան որպես լուրջ խնդիր ավելի շատ են կարևորել (63 տոկոս), քան գյուղաբնակները (56 տոկոս) և այլ քաղաքների բնակիչները (58 տոկոս): Կոռուպցիան «շատ լուրջ» խնդիր ավելի հաճախ որակում են բարձրագույն կրթություն ունեցողները (61 տոկոս), քան թերի միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեցողները (50 տոկոս): Տղամարդկանց և կանանց կարծիքներն այս հարցում նշանակալիորեն չեն տարբերվում:

Այսպիսով, հարցվածների մեծամասնությունը ոչ միայն բավարարված չէ Հայաստանի ընդհանուր տնտեսական իրավիճակով, այլև կարծում է, որ կոռուպցիան կարևոր հիմնախնդիր է: Բարձրագույն կրթություն ունեցողներն ավելի լավատես են երկրում տիրող ընդհանուր իրավիճակի նկատմամբ և ավելի մտահոգված են կոռուպցիայով, ինչպես նաև ավելի են հետաքրքրված քաղաքականությամբ, ուստի, նրանք հնարավորինս ավելի ակտիվ են, քան մյուսները:

Վիճակագրորեն նշանակալից կապ գոյություն ունի քաղաքականությամբ հետաքրքրվածության, երկրում տիրող իրավիճակի և կոռուպցիայի՝ որպես լուրջ հիմնախնդրի ընկալման միջև: Քաղաքականությամբ ավելի մեծ հետաքրքրվածություն ունեցողներն ավելի դրական կարծիքի են ընդհանուր տնտեսական խնդիրների վերաբերյալ, միևնույն ժամանակ նրանք ավելի են հակված այն մտքին, որ կոռուպցիան լուրջ խնդիր է:

Այսպիսով, բարձրագույն կրթությունն ուղեկցվում է քաղաքականությամբ բարձր հետաքրքրվածությամբ, երկրի ընդհանուր իրավիճակի նկատմամբ պակաս վատատեսական մոտեցմամբ և կոռուպցիայի ավելի քննադատական ընկալմամբ:

Գծապատկեր 5. Կոռուպցիայի՝ որպես հիմնախնդրի կարևորության գնահատումը



Կոռուպցիան առօրեական փաստ համարողների թիվը կարծես թե փոքր-ինչ աճել է: Ըստ 2009թ. հետազոտության արդյունքների, հարցվածների մոտ 59 տոկոսը համաձայնել է այն մտքին, որ կոռուպցիան հայաստանյան իրականության մեջ բնական երևույթ է՝ ի համեմատ 2008թ. 51 տոկոսի (Գծապատկեր 6): Թեև կոռուպցիան «բնական երևույթ» են համարել բոլոր տիպի բնակավայրերում հարցվածների մեծամասնությունը, Երևանում այդ կարծիքն ունեցողների բաժինն ավելի մեծ է (66 տոկոս), քան այլ քաղաքներում (58 տոկոս) և գյուղական բնակավայրերում (52 տոկոս):

Գծապատկեր 6. Կոռուպցիայի՝ հայաստանյան իրականության մեջ բնական լինելու գնահատականը



Կոռուպցիայի «բնական երևույթ» լինելու վերաբերյալ կարծիքները տարբեր են ըստ հարցվածների սեռի. եթե տղամարդկանց 39 տոկոսն է լիովին համամիտ, որ կոռուպցիան առօրեական փաստ է, ապա կանանց՝ միայն 30 տոկոսը: Կանանց 20 տոկոսը բոլորովին համամիտ չէ այն պնդմանը, որ կոռուպցիան բնական երևույթ է, մինչդեռ այդ պնդմանը համամիտ են տղամարդկանց 17 տոկոսը:

Մտահոգության տեղիք է տալիս հարցվածների դիրքորոշումը կոռուպցիայի դեմ պայքարի հնարավորությունների հարցում: Շատ քչերն են կարծում, որ կոռուպցիան կարելի է լիովին վերացնել (3 տոկոս) կամ էականորեն նվազեցնել (12 տոկոս), մինչդեռ հարցվածների 80 տոկոսն այն կարծիքի է, որ կոռուպցիան հնարավոր է նվազեցնել միայն որոշ չափով կամ առհասարակ չի կարող կրճատվել: 2008թ. համեմատ այս գնահատականները փոքր ինչ ավելի վատատեսական են դարձել: Թերևս, քաղաքական կամքի իրական դրսևորում է պահանջվում՝ համոզելու համար բնակչությանը, որ իրերի դրությունը կարող է փոխվել:

ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՈՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿՆ ԱՃԵԼ Է

Այն հարցին, թե արդյոք կոռուպցիայի մակարդակը նախորդ տարվա համեմատ ավելի բարձր է, ցածր է, թե նույնն է, 2009թ. հարցվածների մոտ 38 տոկոսը նշել է, որ այն «գրեթե նույնն է», 27 տոկոսը համարել է, որ կոռուպցիայի մակարդակը նախորդ տարվա համեմատ որոշ չափով կամ շատ ավելի բարձր է, և միայն 19 տոկոսն է համարել, որ այն փոքր-ինչ կամ մեծապես նվազել է:

2008թ.-ին նույն հարցի պատասխանները փոքր-ինչ այլ են եղել. կոռուպցիայի մակարդակն անփոփոխ համարողների բաժինը գրեթե նույնն է եղել՝ 37 տոկոս, մինչդեռ այն

որոշակիորեն կամ էականորեն բարձրացած էին համարել հարցվածների միայն 18 տոկոսը: Այսինքն, 2008 թվականի համեմատ 2009 թվականին հարցվածների մեջ կոռուպցիայի աճ նկատածների բաժինը գրեթե կրկնապատկվել է (տես՝ Հավելված Բ-ի Հ7 Աղյուսակը):

Այն հարցին, թե արդյոք փոխվել է պետական պաշտոնյաների կողմից կաշառքներ պահանջելու հաճախականությունը, հարցվածների 29 տոկոսը պատասխանել է, որ այն մնացել է նույնը, ինչ նախորդ տարի: Հարցվածների մոտ 20 տոկոսը նշել է, որ նախորդ տարվա համեմատ այն նվազել է, իսկ 23 տոկոսը՝ հակառակը (Գծապատկեր 7):

Գծապատկեր 7. Պետական պաշտոնյաների կողմից պահանջվող կաշառքի հաճախականության փոփոխությունը



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Հարցվածներին խնդրել են գնահատել կոռուպցիան պետական տարբեր պետական հաստատություններում և հիմնարկներում: Հարցվածների երկու երրորդը հավատացած է, որ դատարանները և դատախազությունը «մեծապես» (39 տոկոս) կամ «որոշ չափով» (26 տոկոս) կոռումպացված են: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նույնպես համարվել է առավել կոռումպացված մարմիններից մեկը. ընդ որում, հարցվածների 33 տոկոսը նշել է, որ այն «մեծապես» կոռումպացված է, իսկ 23 տոկոսը՝ որ «որոշ չափով» է կոռումպացված: Նախարարությունները և մարզային իշխանությունները ևս ստացել են բացասական գնահատականներ: Նախարարություններում կոռուպցիայի մակարդակը «շատ բարձր» կամ «որոշակիորեն բարձր» են համարել հարցվածների համապատասխանաբար 27 և 31 տոկոսը, իսկ մարզպետարաններում՝ 22 և 29 տոկոսը:

Հարցվածների կողմից մարզպետարանները գնահատվել են ավելի կոռումպացված, քան Երևանի քաղաքապետարանը և տեղական ինքնակառավարման մարմինները (քաղաքապետարանները, թաղապետարանները և գյուղապետարանները): Տնային տնտեսություններում հարցվածների 51 տոկոսը կարծում է, որ մարզպետարանները կոռումպացված են «մեծապես» կամ «որոշ չափով», մինչդեռ Երևանի քաղաքապետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների համար այս թվերը համապատասխանաբար կազմում են 41 տոկոս և 42 տոկոս (Գծապատկեր 8):

Գծապատկեր 8. Կոռուպցիայի տարածվածությունն ըստ ոլորտների և ծառայությունների (2009թ.)



Սակայն, դրանք բոլոր պատասխանների վրա հիմնված ընդհանուր արդյունքներն են: Երևանի բնակիչների ընկալումները քաղաքապետարանի նկատմամբ առանձին վերլուծելիս պարզվում է, որ երևանաբնակների 58 տոկոսը քաղաքապետարանն համարում է «մեծապես» կամ «որոշ չափով» կոռումպացված: Նմանապես, միայն մարզերի բնակիչների պատասխանները վերլուծելիս ստացվում է, որ մարզպետարանները «մեծապես» կամ «որոշ չափով» կոռումպացված են ընկալում հարցվածների 48 տոկոսը, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները «մեծապես» կամ «որոշ չափով» կոռումպացված են համարում 34 տոկոսը (Գծապատկեր 9): Այսպիսով, առանձին վերլուծության դեպքում մարզի բնակիչների համար տեղական ինքնակառավարման մարմիններն ավելի վստահելի են համարվում, մինչդեռ Երևանի քաղաքապետարանը և մարզպետարանները համարվում են ավելի կոռումպացված: Հարցվածների, համապատասխանաբար, մոտ 44 և 51 տոկոսը կարծում են, որ Նախագահի աշխատակազմը և Կառավարության աշխատակազմը «մեծապես» կամ «որոշ չափով» կոռումպացված են, մինչդեռ, համապատասխանաբար, 19 և 16 տոկոսը հավատացած են, որ դրանք «բնավ կոռումպացված չեն» կամ «շատ քիչ» են կոռումպացված:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը ամենասակավ կոռումպացված հաստատությունն է համարվել. այն «բնավ չկոռումպացված» կամ «շատ քիչ կոռումպացված» են գտել հարցվածների 41 տոկոսը: Սակայն, այս հաստատության առնչությամբ բավական բարձր է «չգիտեմ» կամ «հրաժարվում եմ» պատասխանների տեսակարար կշիռը (38 տոկոս):

«Չգիտեմ» պատասխանն ընտրածների կամ պատասխանից խուսափածների բաժինը բավական մեծ է նաև Քաղաքացիական ծառայության խորհրդի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Մարդու իրավունքների պաշտպանի, Նախագահի և Կառավարության աշխատակազմերի կոռումպացվածությունը գնահատելիս, ինչը խոսում է

հանրորեն կարևոր կառույցներում կոռուպցիայի վերաբերյալ որոշակի կարծիքի բացակայության կամ այն հայտնելու անվճռականության մասին[3]:

Գծապատկեր 9. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կոռումպացվածության ընկալումները (2009թ.)[4]



Հարցվածները կոռումպացվածության մեջ ավելի շատ կասկածում են բարձրաստիճան պաշտոնյաներին, և այդ կասկածները 2009 թվականին, 2008 թվականի համեմատ, նկատելիորեն խստացել են: Այն հարցին, թե պետական հատվածի որ օղակն է առավել կոռումպացված, հարցվածների մեծամասնությունը (58 տոկոսը, 2008թ.՝ 45 տոկոսի դիմաց) նշել են, որ կոռուպցիան առավել տարածված է բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում: Հարցվածների 21 տոկոսը կոռուպցիան առավել տարածված է համարել միջին օղակի պետական պաշտոնյաների շրջանում և միայն 6 տոկոսն է գտել, որ այն ավելի տարածված է ստորին օղակներում պաշտոնավարողների մոտ: Հարցվածների 8 տոկոսը կարծում է, որ կոռուպցիայի չափը նույնն է բոլոր մակարդակներում (Գծապատկեր 10): Սա ցույց է տալիս, որ հայաստանցիների գերակշիռ մասը հավատացած է, որ կոռուպցիան երկրում ավելի շուտ գործում է վերևից ներքև, քան հակառակ ուղղությամբ:

---

[3]Զրուցավարների և խմբավարների մեծ մասի կարծիքով հետազոտության այս հարցերը չափազանց նուրբ են, և հարցվողների անկեղծությանը քիչ են նպաստում հարցման անանուն լինելու հանգամանքի հաստատումն ու վերահաստատումը: Որոշ դեպքերում չպատասխանողների մեծ բաժինը, թերևս, պայմանավորված է եղել ավելի շատ այդ մարմինների (օրինակ՝ օմբուդսմենի գրասենյակի, իրավապահ մարմինների, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի) վերաբերյալ իրազեկության պակասով, քան հարցերի զգայուն լինելով:

[4] Երևանի քաղաքապետարանի համար հաշվարկված թվերը հիմնված են միայն երևանաբնակների պատասխանների վրա, իսկ մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների համար հաշվարկված թվերը՝ միայն մարզերում հարցվածների պատասխանների վրա:

Գծապատկեր 10. Կոռուպցիայի տարածվածությունն ըստ պետական պաշտոնյաների դիրքի



ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ԱՄԵՆԱԿՈՌՈՒՄՊԱՑՎԱԾԸ

Հետազոտության ընթացքում հարցվածներին խնդրել են գնահատել Հայաստանում կոռուպցիայի մակարդակն ըստ ոլորտների և ծառայությունների (Գծապատկեր 11)։ Հարցվածների կարծիքով, Հայաստանում առավել կոռումպացված են ընտրական համակարգերը և գործընթացները, դատարանները, դատախազությունը, առողջապահությունը, հարկային ծառայությունը, ոստիկանությունը և մաքսային ծառայությունը։

Հարցվածների երկու երրորդը կարծում է, որ կոռուպցիան մեծապես կամ որոշ չափով բնորոշ է ընտրական գործընթացներին։ Կոռուպցիան ոստիկանությունում ևս դիտարկվում է որպես միանգամայն բնորոշ երևույթ։ 2009թ. հարցվածների 55 տոկոսը (2008թ. 62 տոկոսի դիմաց) մեծապես կամ որոշ չափով կոռումպացված է համարում ճանապարհային ոստիկանությունը, իսկ 57 տոկոսը (2008թ. 65 տոկոսի դիմաց) նույն կարծիքն ունի ոստիկանության մյուս կառույցների (բացառությամբ ճանապարհային ոստիկանության) մասին։ Սակայն, նախորդ տարվա համեմատ ոստիկանությունում կոռուպցիայի մակարդակի սակավացման միտումը ապագա զարգացումների տեսանկյունից ուշադրության արժանի և հուսադրող փաստ է։

Առողջապահության համակարգը շատ կամ որոշ չափով կոռումպացված է համարել հարցվածների 60 տոկոսը, կրթության համակարգի մասին նույն կարծիքն է հայտնել հարցվածների 56 տոկոսը։ Կոռուպցիան զգալի է համարվել նաև հարկային ծառայությունում (54 տոկոս) և մաքսային մարմիններում (52 տոկոս)։ Սակավ կոռումպացված է համարվել կոմունալ-կենցաղային ծառայությունների ոլորտը. 2009թ. հարցվածների 82 տոկոսը (2008թ.՝ 68 տոկոս) նշել է, որ կոռուպցիան այդ ոլորտում շատ հազվադեպ երևույթ է կամ չկա։ Կոռուպցիայի տարածվածության առումով դրական իմիջ ունեցողների ցանկում են նաև հեռահաղորդակցության ոլորտը, որում կոռուպցիայի շատ հազվադեպ լինելուն կամ բացակայությանը հավատացում են հարցվածների 77 տոկոսը (2008թ.՝ 61 տոկոս), համայնքային (աղբահանում, թույլտվությունների տրամադրում) ծառայությունները (76 տոկոս, 2008թ. 54 տոկոսի դիմաց), ինչպես նաև եկեղեցին (78 տոկոս, 2008թ. 52 տոկոսի դիմաց)։ Հարցվածների 29 տոկոսը նշել է, որ կոռուպցիան բացակայում է սոցիալական ապահովման ծառայություններում, մինչդեռ 16 տոկոսն այն շատ տարածված երևույթ է համարում է այդ ոլորտում։ Ինչ վերաբերում է հասարակական կազմակերպություններին, ապա կոռուպցիան այստեղ հազվադեպ երևույթ են համարել հարցվածների 31 տոկոսը, իսկ շատ տարածված՝ 4 տոկոսը։

Գծապատկեր 11. Կոռուպցիայի տարածվածությունն ըստ ոլորտների և ծառայությունների (2009թ.)



Հարցվածներին խնդրել էին նշել Հայաստանում երեք առավել կոռումպացված ծառայությունները կամ ոլորտները: Յուրաքանչյուր հարցված նշել է իր կարծիքով առաջին, երկրորդ և երրորդ ամենակոռումպացված ծառայությունը և ոլորտը: Արդյունքների համադրմամբ պարզվել է, որ ամենակոռումպացվածն է համարվում առողջապահության համակարգը (բոլոր պատասխանների 33 տոկոսը), երկրորդ տեղում է կրթության համակարգը (24 տոկոս), և երրորդ տեղում՝ դատարանները (23 տոկոս, տես՝ Հավելված Բ-ի Հ11 աղյուսակը):

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Հասկանալու համար, թե ինչն են հայաստանցիները համարում կոռուպցիայի դրսևորում, հարցվածներին ներկայացվել են մի շարք երևույթներ՝ խնդրելով գնահատել, արդյոք այդ երևույթները կոռուպցիայի դրսևորումներ են, թե՝ ոչ: Արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածներն, ընդհանուր առմամբ, ընկալում են կոռուպցիայի տարատեսակները: Այսպես, 10 հարցվածներից 9-ը հարևանի այգուց առանց նրա թույլտվության միրգ կամ ծաղիկներ քաղելը չեն գնահատել որպես կոռուպցիա (Աղյուսակ 1): Հարցարանում թվարկված մի շարք գործողություններ հստակորեն գնահատվել են որպես կոռուպցիոն: Դատարանում իր օգտին վճիռ կայացնելու նպատակով դատավորին վճարելը կամ վարորդական իրավունքից չզրկվելու համար ոստիկանին կանխիկ գումար տալը զուտ կոռուպցիոն դեպքեր են համարել հարցվածների ճնշող մեծամասնությունը (համապատասխանաբար, 94 տոկոսը և 88 տոկոսը):

Աղյուսակ 1. Կոռուպցիոն են արդյո՞ք նշված գործողությունները («այո» պատասխանները, % ամբողջի մեջ)

	SS 2009	SS 2008	Ձեռն.[5]
Վճարել դատավորին՝ ցանկալի վերաբերմունք/վճիռ ստանալու համար	94	95	97
Ոստիկանին գումար առաջարկել՝ Ձեր վարորդական իրավունքը չառգրավելու համար	88	88	89
Կապերի/ծանոթությունների օգտագործում՝ Ձեզ մոտիկ որևէ մեկին բանակից ազատելու համար	74	66	79
Պետական պաշտոնի չարաշահումն անձնական բիզնեսի նպատակներով	78	69	79
Ուսանողը կամ ուսանողի ծնողը դասախոսին նվեր են տալիս քննությունների օրը	81	70	78
Պետական պաշտոնյան օգնում է բարեկամին ԲՈՒՀ ընդունվել	67	60	75
Փոքր ոչ պաշտոնական վճարումները՝ կենսաթոշակների ստացման համար	63	53	71
Պետական պաշտոնյան երաշխավորում է իր բարեկամին՝ որևէ նախարարությունում աշխատանքի տեղավորելու համար	59	50	69
Պետական պաշտոնյայի կողմից ծառայողական ավտոմեքենայի օգտագործումը անձնական կարիքների համար	49	37	52
Նվեր տալ բժիշկին՝ հատուկ խնամք ստանալու համար	47	48	45
Հարևանի այգուց ծաղիկ կամ միրգ քաղել առանց թույլտվության	10	6	8

Մի շարք գործողություններ ընկալվել են որպես կոռուպցիոն մեծ թվով հարցվածների կողմից: Օրինակ, կենսաթոշակը ստանալիս տրված ոչ պաշտոնական փոքր գումարը կոռուպցիոն դրսևորում են համարել հարցվածների 63 տոկոսը, 67 տոկոսը կոռուպցիա է համարել պետական պաշտոնյայի կողմից իր ազգականին համալսարան ընդունելու հարցում օժանդակություն ցուցաբերելը: Սակայն, հատուկ վերաբերմունքի արժանանալու նպատակով բժշկին նվեր մատուցելը կոռուպցիա են համարել հարցվածների 47 տոկոսը, իսկ 52 տոկոսը հակառակ կարծիքի է եղել:

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, 2008-2009թթ. ընթացքում հանրային կարծիքը որոշ փոփոխություններ է կրել և ավելի շատերն են դիտարկում որոշակի գործողություններ որպես կոռուպցիայի դրսևորում: «Պետական պաշտոնյայի կողմից ծառայողական մեքենան սեփական կարիքների համար օգտագործելը» կոռուպցիայի դրսևորում որակողների բաժինը տնային տնտեսություններում հարցվածների մեջ ավելացել է 12 տոկոսով, իսկ «ուսանողի կամ նրա ծնողի կողմից քննության օրը դասախոսին նվեր մատուցելը» որպես կոռուպցիա ընկալողների բաժինը՝ 11 տոկոսով: Ինը տոկոսային կետով ավելացել է նաև «պետական պաշտոնի չարաշահում անձնական բիզնեսի նպատակներով» և «պետական պաշտոնյան երաշխավորում է

[5] Ձեռնարկությունների հետազոտության մանրամասն արդյունքները ներկայացված են Բաժին երկրորդում:

իր բարեկամին՝ որևէ նախարարությունում աշխատանքի տեղավորելու համար» տարբերակները կոռուպցիոն դրսևորում համարողների բաժինը:

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՓՈՐՁԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կաշառատվությունը կոռուպցիայի գլխավոր բաղադրիչներից է: Այն հարցին, թե ով է նախաձեռնում կաշառք տալը, կարծիքները բաժանվել են գրեթե հավասար. մի մասն ասել է, որ պետական պաշտոնյաներն են պահանջում կաշառք, իսկ մյուս մասը՝ որ քաղաքացուն նախապես հայտնի է, թե երբ է պահանջվում կաշառք տալ: Պետական պաշտոնյաներին կաշառելը հարցվածները համարել են արդյունավետ. կաշառք վճարելու դեպքում քաղաքացին կարող է գրեթե վստահ լինել, որ կստանա ակնկալվող ծառայությունները:

Հարցվածների մեծամասնությունն այն կարծիքին են, որ մարդիկ ներքաշվում են կոռուպցիոն հարաբերությունների մեջ, որովհետև դա հարցերը լուծելու և գործընթացները արագացնելու միակ ուղին է: Ավելին, հարցվածների մեծամասնությունը պատրաստակամ է կաշառք տալ, քանի որ ծառայությունը ստանալու այլ տարբերակ չկա: Նրանք, ովքեր ասել են, որ կաշառք չեն տա, հիմնավորել էին իրենց դիրքորոշումն, ասելով, որ դա անընդունելի են համարում:

Հարցվածների գրեթե երեք քառորդը (72 տոկոսը) ասել է, որ կհրաժարվեր կաշառք վերցնելուց: Կաշառք վերցնելուն պատրաստակամների կեսից ավելին ասել է, որ կաշառք կվերցնի, քանի որ փողի կարիք ունի:

Կաշառատվության նկատմամբ հարցվածների վերաբերմունքի վրա հիմնվելով՝ հետազոտությամբ ընդգրկվածների 42 տոկոսին կարելի է դասել հակակոռուպցիոն խմբին: Սակայն, այդ խմբի տեսակետների հետագա վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ներուժը հազիվ թե ակտիվորեն գործադրվի կոռուպցիայի դեմ պայքարում:

Հարցվածները թվարկել են Հայաստանի հետևյալ ոլորտներն ու ծառայություններն, որտեղ կաշառքի պահանջն առավել հաճախ է հանդիպում. մաքսային մարմիններ, ճանապարհային ոստիկանություն և առողջապահական համակարգ, մինչդեռ կոմունալ ծառայությունների և կապի ոլորտում կաշառքի պահանջը գրեթե չի հանդիպում: Ինչևէ, հարցվածների մեծամասնությունն ասել է, որ նրանց հետ հազվադեպ է պատահել կամ բնավ չի պատահել, որ իրենցից կաշառք պահանջեն:

Հարցվածները կոռուպցիայի փաստի մասին չեն հայտնում պատկան մարմիններին մի շարք պատճառներով, առավելապես դրա անարդյունավետ կամ անիմաստ լինելու պատճառով: Կոռուպցիայի դեմ ակտիվորեն պայքարելու ուղիների մասին տեղեկատվությունը սակավ է. հարցվածների միայն մեկ քառորդն է ասել, որ տեղյակ է, թե կոռուպցիոն դեպքերի մասին որ հաստատություններին պետք է դիմել: Արդյունքում, հարցվածների 99 տոկոսը վերջին տարվա ընթացքում չի հայտնել որևէ կոռուպցիոն գործողության մասին:

ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԻՊՎԱԾ Է ԿԱՇԱՌՔ ՏԱԼ

Հետազոտությամբ ընդգրկվածներին հարց է տրվել պետական պաշտոնյաների և հաստատությունների հետ առնչվելու իրենց սեփական փորձի մասին՝ նպատակ ունենալով բացահայտել կոռուպցիայի հանդեպ եղած վարքագծի այն մոդելը, որը բնորոշ է Հայաստանի հասարակությանը: Պարզվել է, որ հարցվածների զգալի մասը (36 տոկոսը) կաշառք տալիս

նախապես գիտի, թե ինչպես և որքան պետք է տա, 32 տոկոսն արձագանքում է պետական պաշտոնյայի ակնարկին կամ պահանջին, իսկ 19 տոկոսը սեփական հայեցողությամբ է կաշառք առաջարկում (Գծապատկեր 12)։

Գծապատկեր 12. Պետական պաշտոնյաներին կաշառելու առավել հաճախ հանդիպող դեպքերը (2009թ.)



Հարցվածների մեծ մասի կարծիքով, պետական ծառայողներին կաշառք վճարելու դեպքում քաղաքացին կարող է ստանալ ակնկալվող ծառայությունները։ Տասը հարցվածներից վեցը լիովին (16 տոկոսը) կամ որոշ չափով (48 տոկոսը) վստահ է, որ կաշառք տալու պարագայում կստանա ակնկալվող ծառայությունը կամ առաջացած խնդրի լուծումը (Գծապատկեր 13)։

Գծապատկեր 13. Կաշառքի դիմաց ծառայություն ստանալու կամ խնդիրը լուծելու վստահությունը



Հարցվածների ընտրությանն էր ներկայացվել կոռուպցիայի հիմքում ընկած դրդապատճառների մի ցանկ, որից կարելի էր ընտրել մինչև երեք տարբերակ։ Ստացված բոլոր պատասխաններն, ընդհանուր առմամբ, ցույց են տալիս, որ կոռուպցիայի հիմնական դրդապատճառն այն է, որ Հայաստանում «գործը գլուխ բերելու համար այլ ճանապարհ չկա»։ Հարցվածների զգալի մասը (50 տոկոսը) որպես հաջորդ հիմնական դրդապատճառ նշել է գործընթացներն արագացնելու անհրաժեշտությունը։ Կոռուպցիայի հիմքում ընկած այլ շարժառիթներից են՝ պատժից ու պատժամիջոցներից կամ ավելի բարձր պաշտոնական

վճարումներից խուսափելը (24 տոկոս և 20 տոկոս, համապատասխանաբար)։ Ավելի քիչ նշված շարժառիթներից են «պատշաճ վերաբերմունքի արժանանալը» (14 տոկոս), «նախընտրելի կամ արտոնյալ վերաբերմունքի արժանանալը» (12 տոկոս), «եկամտի այլընտրանքային աղբյուր ձեռք բերելը» (12 տոկոս, տես՝ Հավելված Բ-ի Հ19-ը աղյուսակը)։ Այս պատասխանների ամբողջությունը տեղիք է տալիս ենթադրելու, որ մարդիկ վստահ չեն, թե օրինական միջոցներով կկարողանան հասնել նպատակներին, մինչդեռ կոռուպցիան «գործը գլուխ բերելու» որոշակի հնարավորություններ է պարունակում:

ՇԱՏԵՐՆ ԵՆ ՊԱՏՐԱՍՏ ՆԵՐՔԱՇՎԵԼ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԲԱՅՑ ՔՉԵՐՆ ԵՆ ՊԱՏՐԱՍՏ ԱԿՏԻՎՈՐԵՆ ՊԱՅՔԱՐԵԼ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ

Հարցվածների մեծ մասը (53 տոկոսը) պատասխանել են, որ իրենք անձամբ պատրաստ են կաշառք տալ, իսկ 41 տոկոսն ասել է, որ կաշառք չի տա։

Կաշառք տալու դրդապատճառների կազմն ու կառուցվածքը գրեթե նույնն է անկախ հարցվածների սեռից, տարիքից և բնակության վայրից։ Այն հարցին, թե ինչու կաշառք կտային, ճնշող մեծամասնությունը (80 տոկոսը) պատասխանել է, որ ծառայությունը ստանալու այլընտրանք չկա։ Տասը տոկոսը հայտնել է, որ կաշառք կտա, քանի որ այդպես են անում բոլորը։

Նրանք, ովքեր կաշառք չէին տա դա անընդունելի համարելու պատճառով, գերակշիռ մաս են կազմում (66 տոկոս)։ Մոտ 10 տոկոսը նշել է, որ կաշառք չի տա և կաշխատի խնդիրը լուծել օրինական ճանապարհով։ Հարցվածների միայն 8 տոկոսն է ասել, որ կաշառք չի տա պատժվելու վախից (Աղյուսակ 2)։

Աղյուսակ 2. Կաշառք տալու կամ չտալու դրդապատճառները (մինչև 3 պատասխանի հնարավորություն, % բոլոր պատասխաններում)

		2009թ.	2008թ.
Ինչու՞ կտայիք	Քանի որ ծառայությունը ստանալու այլ տարբերակ չկա	80	76
	Քանի որ բոլորը տալիս են	10	8
	Քանի որ կկարողանայի բանակցել ավելի ցածր գումարի վերաբերյալ	4	8
	Այլ	6	7
	Չգիտեմ	1	0.5
Ինչու՞ չէիք տա	Քանի որ դա ինձ համար ընդունելի չէ	66	58
	Կփորձեի հարցը իրավական ճանապարհով լուծել	10	19
	Քանի որ պատժվելու ռիսկը բարձր է	8	5
	Այլ	15	14
	Չգիտեմ	2	3

Թեև մեծամասնությունը չի կարող հրաժարվել կաշառք տալուց, հարցվածների նշանակալի մասը (72 տոկոսը) նշել է, որ կաշառք չի վերցնի։

Կաշառք վերցնելուց հրաժարվողների մեծամասնության (75 տոկոսի) բացատրությունն այն է, որ դա անընդունելի է իր համար: Տասնմեկ տոկոսը նշել է, որ կաշառք չի վերցնի, որովհետև մեծ է պատժվելու վտանգը, իսկ 5 տոկոսը պատասխանել է, որ կաշառք չի վերցնի և կաշխատի խնդիրը լուծել օրինական ճանապարհով:

Կաշառք վերցնելուն պատրաստակամների 52 տոկոսն ասել է, որ կաշառք կվերցնի, քանի որ փողի կարիք ունի, իսկ 34 տոկոսը նշել է, որ կվերցնի, «որովհետև բոլորն են վերցնում» (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Կաշառք վերցնելու կամ չվերցնելու դրդապատճառները (մինչև 3 պատասխանի հնարավորություն, % բոլոր պատասխաններում)

		2009թ.	2008թ.
Ինչու՞ կվերցնեիք	Քանի որ փողի կարիք ունեմ	52	49
	Քանի որ բոլորն են վերցնում	34	33
	Քանի որ պարտավոր կլինեի մի մասը “վերև” տալ	6	7
	Այլ	7	8
	Չգիտեմ	2	2
Ինչու՞ չէիք վերցնի	Քանի որ դա ինձ համար ընդունելի չէ	75	73
	Քանի որ պատժվելու ռիսկը բարձր է	11	11
	Չէի վերցնի և կփորձեի հարցին իրավական ընթացք տալ	5	6
	Այլ	7	9
	Չգիտեմ	1	2

Հիմնվելով կոռուպցիոն իրավիճակներում սեփական վարքագծի գնահատականների վրա, հարցվածներին կարելի է բաժանել չորս հիմնական խմբի. *կոռուպցիան սատարողների*, ովքեր թե՛ կտան, և թե՛ կվերցնեն կաշառք, *կեղծ պրագմատիկների*, ովքեր կաշառք կվերցնեն, բայց չեն տա, *կոռուպցիայի զոհերի*, ովքեր կտան, բայց չեն վերցնի կաշառք, և *հակակոռուպցիոն ներուժ* կրողների, ովքեր ոչ՛ կտան, ոչ՛ էլ կվերցնեն կաշառք (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Հակակոռուպցիոն ներուժի գնահատականը (2009թ.)

	Կտայի	**Չէի տա**
Կվերցնեի	կոռուպցիան սատարողներ, 19%	կեղծ պրագմատիկներ, 3%
Չէի վերցնի	կոռուպցիայի զոհեր, 36%	հակակոռուպցիոն ներուժ, 42%

Ըստ այս մոտեցման, հետազոտությամբ ընդգրկվածների 42 տոկոսին կարելի է դասել հակակոռուպցիոն ներուժ կրողների խմբին: Կարելի էր ակնկալել, որ նրանք, ովքեր ոչ՛ կտային, ոչ՛ էլ կվերցնեին կաշառք, կօժանդակեն երկրում կոռուպցիայի նվազեցման գործին ավելի շատ, քան մյուս երեք խմբերը: Սակայն, վերլուծելով այդ խմբին դասվածների տեսակետները, արդյունքներն այնքան էլ լավատեսական չեն ներուժի գործադրման տեսանկյունից: Այս խմբի ավելի քան կեսը (60 տոկոսը) վստահ է, որ անձամբ ոչինչ չի կարող անել, իսկ 27 տոկոսը կարծում է, որ կոռուպցիայի դեմ պայքարելու համար կարող է միայն զերծ մնալ կոռուպցիոն հարաբերություններից: Սա կոռուպցիայի դեմ պայքարի ավելի պասիվ ճանապարհ է՝ համեմատած այլ տարբերակների, որ կարող էին ընտրել հարցվածները, օրինակ՝ «հայտնել կոռուպցիոն վարքագծի մասին» կամ էլ՝ «մասնակցել հակակոռուպցիոն արշավներին»: Այս երկու տարբերակներից որևէ մեկը, սակայն, ընտրել են հարցվածների միայն 6 տոկոսը (տես՝ Գծապատկեր 15): Հակակոռուպցիոն պայքարը վարից վեր իրականացնելու հեռանկարների տեսանկյունից այս հանգամանքը բավականին մտահոգիչ է: Նույնիսկ անձնական մակարդակում կոռուպցիան մերժող մարդիկ (կաշառք չեն վերցնի, չեն տա) ակտիվ չեն: Նրանցից շատերը կամ ոչինչ չեն կարող անել կամ էլ կարող են միայն ձեռնպահ մնալ կաշառք տալուց:

ԿԱՇԱՌՔԻ ՇՈՐԹՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ՇԱՏ ԵՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ՊԵՏԱՎՏՈՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ

Բացի կոռուպցիայի ընկալման վերաբերյալ հարցերից, հետազոտությամբ բացահայտվել են նաև կաշառքի կամ այլ հավելյալ վճարների հաճախականությունը պետական ծառայությունների և ոլորտների հետ վերջին 12 ամսվա ընթացքում առնչվելիս (Գծապատկեր 14): Հարցվածներն առավել հաճախ առնչվել են առողջապահության ծառայությունների (772 առնչություն անցած մեկ տարվա ընթացքում՝ առնվազն մեկ անգամ), կոմունալ ծառայությունների (967 առնչության դեպք), կրթական համակարգի (553 առնչության դեպք), կապի (788 առնչության դեպք) և սոցիալական ապահովության (580 առնչության դեպք) ոլորտների հետ:

Հետաքրքրական է, որ թեև որոշ ոլորտներ ընկալվում են որպես բավականին կոռումպացված (օրինակ կրթությունը), հարցվածների փոքր մասն է նշել, որ վերջին անգամ այս կամ այն ոլորտի հետ առնչվելիս կաշառք են ուզել: Այսպես, կրթության ոլորտի հետ վերջին մեկ տարում առնչվածների միայն 14 տոկոսն է հայտնել կաշառքի պահանջի մասին: Սա ցույց է տալիս, որ կրթության ոլորտում առկա կոռուպցիայի ընկալումը կարող է չափազանցված լինել, կամ, որ կոռուպցիան այդ ոլորտում ընդունում է այլ ձևեր, օրինակ՝ երկուստեք օգտակար լինելը, տնօրեններին, դասախոսներին կամավոր կերպով նվերներ մատուցելը և այլն: Այս գործողությունները հարցվածները կարող են առաջին հայացքից չընկալել որպես կաշառքին համարժեք քայլեր:

Հարցվածները թվարկել են Հայաստանի հետևյալ ոլորտներն ու ծառայությունները, որտեղ կաշառքի պահանջն առավել հաճախ է հանդիպում. մաքսային մարմիններ (վերջին մեկ տարվա ընթացքում այդ ծառայության հետ առնչվողների 46 տոկոսը նշել է, որ կաշառք են պահանջել), ճանապարհային ոստիկանություն (32%), պետության կողմից երաշխավորված անվճար ծննդօգնության ծառայություն (26%) և առողջապահական համակարգ (25%, բացառյալ անվճար ծննդօգնությունը): Հարցվածները նշել են նաև այն ոլորտները և ծառայությունները, որոնց հետ հաճախ են առնչվել, բայց քիչ են հանդիպել կաշառքի պահանջի դեպքերի. դրանք են սոցիալական ապահովությունը (10%), կոմունալ ծառայությունները (1%) և կապը (1%):

Գծապատկեր 14. Տարաբնույթ ծառայությունների և ոլորտների հետ առնչվելիս կաշառքի պահանջին բախվել են ... (2009թ., «այո» պատասխանների բաժինը, տոկոս ամբողջի մեջ)



Պետական հատվածի հետ շփվելիս առկա որոշակի կոռուպցիոն սցենարների հաճախականության վերաբերյալ հարցին 17 տոկոսը պատասխանել է, որ պաշտոնյաները հիմնականում ուղղակիորեն կաշառք չեն պահանջում, այլ ցույց են տալիս, որ փողի, նվերի կամ «լավ» վերաբերմունքի ակնկալիք ունեն: Տասնմեկ տոկոսը նշել է, որ բոլոր դեպքերում կամ բավականին հաճախ պաշտոնյաներն ուղղակիորեն փող, նվեր կամ լավ վերաբերմունք են պահանջում: Մոտ 9 տոկոսը նշել է, որ գրեթե բոլոր դեպքերում առանձնահատուկ վերաբերմունք ստանալու համար օգտագործել է սեփական կապերը: Հետաքրքրական է, որ այս բոլոր սցենարների վերաբերյալ հարցվածների մեծ մասը պատասխանել է, որ նրանց հետ դա պատահել է հազվադեպ կամ առհասարակ չի պատահել: Տասը հարցվածներից 8-ը նշել է, որ ստիպված չի եղել փող, նվեր կամ լավ վերաբերմունք ցուցաբերել պետական ծառայողին կամ դա հազվադեպ է արել:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՓԱՍՏԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼՆ ԱՄՈԹԱԼԻ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ

Հարցման ընթացքում տրված մի շարք հարցեր նպատակ են ունեցել պարզելու կոռուպցիայի դեմ պայքարի մեջ ներգրավվելու պատրաստակամությունը: Ընդհանուր առմամբ, հայաստանցիները, կարծեք թե, խույս են տալիս կոռուպցիայի դեմ պայքարում ակտիվ դերակատարումից: Օրինակ, այն հարցին, թե ինչ կարող եք անձամբ անել Հայաստանում կոռուպցիան նվազեցնելու համար, հարցվածների մեծ մասը (60%-ը, 2008թ. 51%-ի դիմաց) պատասխանել է, որ ոչինչ չի կարող անել: Եվ թեև հուսադրող է այն փաստը, որ հարցվածներից շատերը կխուսափեին պետական ծառայությունների դիմաց կաշառք տալուց (27%-ը, 2008թ. 34%-ի դիմաց) և պաշտոնյաներին ու նրանց ազգականներին լավ վերաբերմունք ցուցաբերելուց (13%-ը, 2008թ. 14%-ի դիմաց), խիստ փոքրաթիվ են նրանք, ովքեր նախաձեռնություն

կցուցաբերեն և իշխանություններին կամ ՀԿ-ներին կհայտնեն կաշառքի փաստի մասին կամ կմասնակցեն հակակոռուպցիոն կրթական և ճանաչողական արշավներին (Գծապատկեր 15)։

Հարցվածների՝ կոռուպցիայի փաստի մասին հայտնելու ակնհայտ դժկամությունը մասամբ պայմանավորված է հայտնելու ընթացակարգերի և պատկան հաստատությունների ու մարմինների մասին տեղեկատվության բացակայությամբ։

Հարցվածների միայն 24 տոկոսն է պատասխանել, որ գիտի, թե ինչ հաստատությունների պետք է դիմել պետական պաշտոնյայի թույլ տված կոռուպցիայի փաստի մասին։ Առավել հաճախ նշված հաստատություններն են՝ ոստիկանությունը և գլխավոր դատախազությունը։ Ավելի քիչ նշված հաստատություններից են՝ հատուկ քննչական վարչությունը, Մարդու իրավունքների պաշտպանը դատարանները, ինչպես նաև ՀՀ Նախագահի աշխատակազմը, ՀԿ-ները։

Գծապատկեր 15. Ի՞նչ կարող եք անել Հայաստանում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար



Այն ուղղակի հարցին, թե արդյոք հարցվածները կամ նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը վերջին 12 ամսվա ընթացքում հայտնել է որևէ պետական պաշտոնյայի կոռուպցիոն գործողության մասին, գրեթե բոլորը (99%-ը) պատասխանել է՝ ոչ, և միայն 1%-ն է դրական պատասխան տվել։ Ըստ հարցվածների, կոռուպցիոն գործողության մասին համապատասխան մարմիններին չհայտնելը կապված է մի շարք հանգամանքների հետ։ Այսպես, հարցվածները նշել են կոռուպցիայի մասին չհայտնելու հետևյալ հիմնական պատճառները.

- Հայաստանի հասարակությունը չի ողջունում կոռուպցիայի մասին հայտնող անձանց (71%),

- կոռուպցիայի մասին հայտնելուց հետո միևնույն է ոչ մի քայլ չի ձեռնարկվի (69%),

- հայտնող անձինք կարող են դառնալ հաշվեհարդարի կամ վրեժխնդրության զոհ (47%):

Ի դեպ, հարցվածների մեջ համեմատաբար մեծ է նաև նրանց տեսակարար կշիռը (9-11%՝ կախված առաջարկված այլընտրանքներից), ովքեր չեն ցանկացել նշել կոռուպցիայի մասին չհայտնելու հնարավոր պատճառները: Հարցվածների մեծամասնությունը կրավորական կեցվածք ունի և համամիտ է այն պնդմանը, որ «Չարժե հայտնել կոռուպցիայի մասին, երբ այն անձամբ ինձ չի վնասում» (55%-ը, 2008թ. 37%-ի դիմաց): Համանմանորեն, հարցվածների զգալի մասը (44 տոկոսը) կոռուպցիայի մասին հայտնելուց ձեռնպահ մնալու հիմնավոր պատճառ է համարում այն պնդումը, թե «Մարդիկ հիմնականում կոռուպցիայով են զբաղվում տնտեսական դժվարությունների պատճառով» (Աղյուսակ 5): Բավականին մեծ է նրանց թիվը, ովքեր չեն ցանկացել նշել կոռուպցիայի դեպքերի մասին չհայտնելու որևէ պատճառ (9-11 տոկոս՝ կախված կոռուպցիայի մասին չհայտնելու պատճառից):[6]

Աղյուսակ 5. Կոռուպցիոն դեպքերի մասին իրավասու մարմիններին չհայտնելու պատճառները (2008թ. և 2009թ., մինչև 3 պատասխանի հնարավորություն)

Պատճառներ	2009	2008
Մեր հասարակությունում կոռուպցիայի մասին հայտնելը չի խրախուսվում	71	64
Նույնիսկ կոռուպցիայի մասին հայտնելուց հետո ոչ մի քայլ չի ձեռնարկվի	69	64
Կարիք չկա կոռուպցիայի մասին հայտնել, եթե այն անձամբ ինձ չի վնասում	55	37
Կոռուպցիայի մասին հայտնողին կպատժեն	47	47
Կարիք չկա կոռուպցիայի դեպքերի մասին հայտնել, քանի որ դրա մասնակիցներն այդ քայլին դիմում են հիմնականում տնտեսական կարիքից դրդված	44	34

ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդհանուր առմամբ, հակակոռուպցիոն նախաձեռնությունները հայտնի չեն հանրությանը: Չնայած մեծ թվով հարցվածներ ավելի շատ ընդունում, քան ժխտում են, որ հասարակական կազմակերպությունները Հայաստանում կարող են պայքարել կոռուպցիայի դեմ, միայն քչերն են տեղյակ այդ կազմակերպություններից որևէ մեկի մասին: Նշված կազմակերպություններից առավել հայտնիներն են Երևանի Մամուլի ակումբը և Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան: Հարցվածների 90 տոկոսը, սակայն, անտեղյակ է շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների (ՇՊԱԿ) մասին:

Մեծ թվով հարցվածներ ավելի շատ ընդունում են քան ժխտում, որ հասարակական կազմակերպությունները Հայաստանում կարող են պայքարել կոռուպցիայի դեմ, սակայն հարցվածների գրեթե կեսն ասել է, որ չի դիմի ՀԿ-ի կողմից ղեկավարվող հակակոռուպցիոն որևէ կենտրոն: Այն հարցին, թե ինչ տեղեկատվություն կցանկանան ստանալ հակակոռուպցիոն պայքարով զբաղվող հասարակական կազմակերպություններից, հարցվածների կարծիքները

[6] Քանի որ կոռուպցիայի դեպքի մասին չհայտնելու յուրաքանչյուր պատճառ հարցվել է առանձին՝ այո/ոչ տարբերակով, որոշակի քանակությամբ “չգիտեմ” պատասխանները ևս տարբեր են եղել առաջադրված յուրաքանչյուր պատճառի համար:

տարբեր են. ավելի հաճախ ակնկալում են ստանալ տեղեկատվություն քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների մասին, գործող օրենսդրության մասին, իսկ ավելի կոնկրետ օգնություն, ինչպիսինն է իրավական աջակցությունը, ամենից ավելի հազվադեպ է նշվում:

Հայաստանում հակակոռուպցիոն պայքարով զբաղվող պետական հաստատություններից առավել հայտնի է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, որը հարցվածների մեծ մասի կարծիքով արդյունավետ աշխատանք է իրականացնում: Հարցվածների 81 տոկոսն ասել է, որ տեղյակ է ճանապարհային ոստիկանության համակարգի բարեփոխումների մասին, մոտավորապես նույն թվով հարցվածներ (80%) էլ նշել են, որ գիտեն առողջապահության նախարարության թեժ գծի մասին:

Հարցվածների գրեթե կեսը համարում է, որ Հայաստանի կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարելու անկեղծ ցանկություն և կամք ունի, մինչդեռ հարցվածների կարծիքները կառավարության հակակոռուպցիոն ջանքերի արդյունավետության անչությամբ բավական տարազան են:

ՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԵԹԵ ԱՆՀԱՅՏ ԵՆ

Այն հարցին, թե տեղյակ են արդյոք Հայաստանում կոռուպցիայի դեմ ակտիվորեն պայքարող որևէ ՀԿ-ի մասին, հարցվածների գերակշռող մասը (85%-ը) խոստովանել է իր անտեղյակությունը, իսկ 7 տոկոսը նշել է, որ առհասարակ չգիտի, թե ինչ է ՀԿ-ն: «Այո» պատասխանը տվել են հարցվածների միայն 7 տոկոսը: Այդպիսի ՀԿ-ների մասին իրազեկվածությունը փոքր-ինչ տարբերվում է ըստ հարցվածների բնակության վայրի, կրթամակարդակի և սեռի (Աղյուսակ 6):

Աղյուսակ 6. ՀԿ-ների մասին իրազեկությունն ըստ բնակավայրի, կրթության և սեռի (2009)[7]

	Այո	Ոչ	Չգիտեմ, թե ՀԿ-ն ինչ է
Երևան	4	93	3
Գյուղական բնակավայրեր	6	81	11
Այլ քաղաքներ	11	80	8
Բարձրագույն կրթություն	11	88	1
Տարրական կրթություն	0	72	28
Արական	8	85	5
Իգական	6	85	8

Հակակոռուպցիոն գործունեություն ծավալող ՀԿ-ների մասին սակավաթիվ տեղյակների պատասխաններից պարզվել է, որ դրանցից առավել հայտնի են Երևանի մամուլի ակումբը (39%), Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (39%), Ինֆորմացիայի

[7] «Չգիտեմ» և «Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակները ներկայացված չեն:

ազատության կենտրոնը (15%), Թրանսփերենսի ինթերնեյշնլը (9%) և Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը (IFES, 9%)[8]:

Մեծ թվով հարցվածներ գրեթե հավասարապես ընդունում կամ ժխտում են, որ հասարակական կազմակերպությունները Հայաստանում կարող են պայքարել կոռուպցիայի դեմ. 47 տոկոսը «լիովին» կամ «որոշակիորեն» համոզված է եղել դրանում, 39 տոկոսը հակառակ կարծիքն է հայտնել, իսկ մնացածը չեն իմացել կամ հրաժարվել են պատասխանել (Գծապատկեր 16):

Այն հարցին, թե կոռուպցիայի զոհ դառնալու դեպքում օգնություն հայցով կդիմեն արդյոք ՀԿ-ի կողմից ղեկավարվող հակակոռուպցիոն որևէ կենտրոն, հարցվածների մեծ մասը (43%) պատասխանել է «ոչ»: Քառասուն տոկոսը պատասխանել է, որ կդիմի, իսկ մնացածները չեն իմացել կամ հրաժարվել են պատասխանելուց: Սա ցույց է տալիս, որ անհրաժեշտ է առավել ակտիվ քարոզչական աշխատանք տանել Հայաստանի քաղաքացիների շրջանում՝ նրանց տեղեկացնելով կոռուպցիայի հետ առնչվելու դեպքում ՀԿ-ներին դիմելու հնարավոր օգուտների մասին:

Գծապատկեր 16. Համաձայն եք արդյո՞ք, որ Հայաստանում ՀԿ-ները կարող են պայքարել կոռուպցիայի դեմ (2009թ.)



Հարցվածներին ներկայացվել է ՀԿ-ների հակակոռուպցիոն աջակցության տարբեր ձևերի ցանկ՝ պարզելու համար կոնկրետ տիպի աջակցությունը, որ նրանք կցանկանան ստանալ ՀԿ-ներից: Հարցվածների մեծամասնությունը (55%, 2008թ. 61%-ի դիմաց) ակնկալում է ստանալ տեղեկատվություն՝ կոռուպցիայի առնչությամբ քաղաքացիների իրավունքների մասին: Մոտ 40 տոկոսը նշել է, որ կցանկանար ստանալ տեղեկատվություն կոռուպցիայի առնչությամբ քաղաքացիների պարտականությունների մասին, իսկ 38 տոկոսն ասել է, որ կուզենար տեղեկանալ հակակոռուպցիոն օրենսդրությանը: Հարցվածների 27 տոկոսը նշել է, որ կցանկանար տեղեկանալ այն հաստատությունների մասին, որոնց կարելի է բողոք ներկայացնել պաշտոնյաների դեմ: Սա զարմանալի չէ, եթե հաշվի առնենք այն հարցվածների մեծ թիվը, ովքեր չգիտեն, թե որտեղ է պետք դիմել կոռուպցիայի դեպքերի հետ առնչվելիս: Հակակոռուպցիոն աջակցության այլ տեսակներ, որ հարցվածները կուզենային ստանալ ՀԿ-ներից, հակակոռուպցիոն կրթական գործունեությունն է (26%), կոռուպցիայի վերաբերյալ բողոքների ձևակերպման անվճար իրավախորհրդատվությունը (24%), հակակոռուպցիոն իրազեկման աշխատանքները (19%), դատարանում անվճար ներկայացուցիչ ունենալու հնարավորությունը

[8] Տոկոսների հաշվարկի հիմքում ընկած է 156 պատասխան:

(15%), կոռուպցիայի դեպքերի մասին ապացույցներ հավաքելիս անվճար իրավաբանական աջակցությունը (20%) և անվճար իրավաբանական աջակցությունը կոռուպցիայի դեպքերի մասին փաստաթղթերի պատրաստման և հանձնման գործում (17%):

Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների (ՇՊԱԿ) վերաբերյալ տրված կոնկրետ հարցին ի պատասխան, հարցվածների միայն 10 տոկոսն է նշել, որ լսել է ՇՊԱԿ-ի մասին: ՇՊԱԿ-ի գործունեության մասին տեղյակ փոքրաթիվ հարցվածների զգալի մասը (40%) նշել է, որ տեղյակ է դրանց դերի մասին, սակայն շատ քչերն են իմացել, թե ինչպես օգտվել ՇՊԱԿ-ից (18%) կամ դրանց ծառայություններից (26%, Գծապատկեր 17):

Գծապատկեր 17. ՇՊԱԿ-երի գործունեության մասին տեղեկացվածությունը (2008 թ. և 2009 թ.)



ՏԱՐԲԵՐ ԿԱՐԾԻՔՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քանի որ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը (ՀԳՄԾ) սատարում է մի քանի պետական կազմակերպությունների հակակոռուպցիոն ջանքերին, հետազոտությամբ փորձ է արվել պարզելու, թե արդյոք հարցվածները գիտեն, թե որոնք են դրանք և որքանով է արդյունավետ դրանց պայքարը կոռուպցիայի դեմ: 2009 հարցվածների միայն 16 տոկոսն է տեղյակ եղել Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի մասին: Հանձնաժողովի գործունեությանը ծանոթ հարցվածների 39 տոկոսը նշել է, որ այդ հաստատության պայքարը կոռուպցիայի դեմ լիովին կամ որոշակիորեն արդյունավետ է, մինչդեռ հարցվածների 24 տոկոսն այն համարել են լիովին կամ որոշակիորեն անարդյունավետ: Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակի գործունեությանը ծանոթ է եղել հարցվածների երկու երրորդից ավելին (71%-ը), իսկ նրանցից 47 տոկոսը կարծիք է հայտնել, որ դրա պայքարը կոռուպցիայի դեմ արդյունավետ է, ի հակառակ այն 22 տոկոսի, որն այդ պայքարը անարդյունավետ է համարել: Ինչ վերաբերում է Վերահսկիչ պալատին, 47 տոկոսը նշել է, որ տեղյակ է դրա գործունեությանը, մինչդեռ 53 տոկոսը նշել է, որ տեղյակ չէ: Տեղյակների 21 տոկոսը ոչ այնքան արդյունավետ կամ բոլորովին անարդյունավետ է համարել Վերահսկիչ պալատի պայքարը կոռուպցիայի դեմ (Գծապատկեր 18):

Գծապատկեր 18. Հակակոռուպցիոն կառույցների գործունեության արդյունավետությունը (2009թ.)



Այն հարցին, թե արդյոք հարցվածները գիտեն որևէ կազմակերպություն, որն իրենց մարզում անվճար իրավախորհրդատվություն է տրամադրում կոռուպցիայի հետ կապված դեպքերի վերաբերյալ, չնչին թվով հարցվածներ՝ 3 տոկոսը, նշել են, որ տեղյակ են այդպիսի կազմակերպությունների մասին, ի տարբերություն 97 տոկոսի, որը տեղյակ չէ:

Պատասխանելով ՀՀ կառավարության կողմից իրականացող հակակոռուպցիոն միջոցառումների մասին հարցին՝ հարցվածների մեծամասնությունն (74%) ասել է, որ տեղյակ չէ, և միայն 25 տոկոսն է պատասխանել «այո»: Որպես Հայաստանի կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն գործողություն, հարցվածների 81 տոկոսն ասել է, որ տեղյակ է ճանապարհային ոստիկանության համակարգի բարեփոխումների մասին, մոտավորապես նույն թվով հարցվածներ (80%) էլ նշել են, որ գիտեն առողջապահության նախարարության թեժ գծի մասին: Ավելի քիչ թվով հարցվածներ են տեղյակ եղել կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության (55%), մաքսային հաշվարկների թափանցիկության (41%) և միջազգային կոնվենցիաների ստորագրման (39%) մասին (Աղյուսակ 7):

Նրանք, ովքեր տեղյակ էին կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի մասին (13%), այդ ծրագրի արդյունավետության վերաբերյալ տվել են իրենց գնահատականը: Հարցվածների 57 տոկոսն այն մեծապես կամ որոշակիորեն արդյունավետ է համարել, իսկ 35 տոկոսի կարծիքով այն «մեծապես» կամ «որոշակիորեն» անարդյունավետ է:

Աղյուսակ 7. ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն որոշ միջոցառումների մասին տեղեկացվածությունը (2008թ. և 2009թ.)

Միջոցառումներ	**2009թ.**	**2008թ.**
Պետավտոտեսչության բարեփոխումներ	81	78
ՀՀ Առողջապահության նախարարության թեժ գիծ	80	74
Հակակոռուպցիոն ռազմավարություն	55	57
Մաքսային կոմիտեի հաշվարկների թափանցիկության ապահովում	41	58
Միջազգային կոնվենցիաների ստորագրում	40	30

Այն հարցին, թե արդյոք Հայաստանի կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարելու անկեղծ ցանկություն և կամք ունի, հարցվածների գրեթե կեսը (48%) դրական է պատասխանել, մինչդեռ 44 տոկոսը չեն կիսել այդ համոզմունքը: Այս տվյալներն ըստ տարածաշրջանների վերլուծելիս ակնհայտ է դառնում, որ երևանաբնակներն առավել քննադատաբար են մոտենում կառավարության հակակոռուպցիոն ջանքերին, քան այլ քաղաքների բնակիչներն ու գյուղաբնակները: Երևանաբնակ հարցվածների 47 տոկոսը չի համաձայնել այն մտքին, որ ներկայիս Կառավարությունն անկեղծ ցանկություն և կարողություն ունի պայքարելու կոռուպցիայի դեմ, մինչդեռ այլ քաղաքների բնակիչների և գյուղաբնակների, համապատասխանաբար, 53 և 48 տոկոսը համաձայնել են այդ մտքին:

Նույն պատկերն է ստացվում կոռուպցիայի դեմ պայքարի հարցում՝ կառավարության ջանքերի արդյունավետությանը վերաբերող հարցի պատասխաններով: Նրանց տեսակարար կշիռը, ովքեր կարծում են, որ կառավարության ջանքերն ընդդեմ կոռուպցիայի անարդյունավետ են, Երևանում կազմում է 55 տոկոս, ի համեմատություն այլ քաղաքաբնակների՝ 45 և գյուղաբնակների՝ 44 տոկոսի: Ընդհանուր առմամբ, հետազոտությամբ հարցվածների 48 տոկոսը հավատում է, որ կառավարության պայքարը կոռուպցիայի դեմ անարդյունավետ է, 39 տոկոսը ենթադրում է, որ արդյունավետ է, իսկ 14 տոկոսն ասել է, որ «չգիտե» (Գծապատկեր 19):

Գծապատկեր 19. Կառավարության հակակոռուպցիոն գործունեության արդյունավետության գնահատումը (2008թ. և 2009թ.)



ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՍԵԿՈՍԵՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Կոռուպցիայի մասին տեղեկատվություն ստանալու համար հայաստանցիների մեծ մասը հակված է վստահել զանգվածային լրատվամիջոցներին և ասեկոսեներին: Այն հարցին, թե տեղեկատվության որ աղբյուրներին են վստահում երկրում կոռուպցիայի մակարդակը գնահատելու համար, 75 տոկոսը պատասխանել է, որ հիմնվում է զանգվածային լրատվամիջոցների (հեռուստատեսություն, ռադիո և թերթեր) կողմից տրամադրված տեղեկատվության վրա: Մոտ 65 տոկոսը նշել է, որ տեղեկատվություն է ստանում ընկերների և ծանոթների հետ ունեցած զրույցներից, իսկ 50 տոկոսը՝ որ հիմնվում է ազգականների կամ

ընտանիքի անդամների տրամադրած տեղեկատվության վրա: Մեկ քառորդը կազմող փոքրաթիվ հարցվածներ պատասխանել են, որ կոռուպցիայի իրենց գնահատականը հիմնված է անձնական փորձի վրա, և միայն 9 տոկոսն է նշել, որ վստահում է ՀԿ-ներից ստացած տեղեկատվությանը (Գծապատկեր 20):

Գծապատկեր 20. Կոռուպցիայի մակարդակը գնահատելիս տեղեկատվության առավել կարևոր աղբյուրները (2008թ., և 2009թ., 3 պատասխանի հնարավորություն)



Այս գնահատականներում առկա են որոշ տարբերություններ ըստ տարածաշրջանների. Երևանից դուրս՝ այլ քաղաքներում և գյուղերում ավելի շատ են հակված վստահել զանգվածային լրատվամիջոցներին, մինչդեռ երևանաբնակները կոռուպցիայի մասին տեղեկանալու համար ավելի շուտ հիմնվում են ասեկոսեների (զրույցներ ընկերների և ծանոթների հետ) վրա: Այլ քաղաքներում և գյուղերում բնակվող հարցվածների 80 տոկոսը հիմնվում են զանգվածային լրատվամիջոցների տեղեկատվության վրա, այնինչ Երևանում հարցվածների 68 տոկոսն է վստահում դրան: Երևանաբնակների 62 տոկոսը հիմնվում է ընկերների և ծանոթների հետ զրույցների վրա, ի տարբերություն այլ քաղաքների բնակիչների 72 տոկոսի, և գյուղաբնակների 61 տոկոսի:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրանքի չափը՝ 2009թ. հետազոտությամբ ընդգրկվել են Հայաստանի չափահաս (18 տարեկան և բարձր) բնակչությունը ներկայացնող 1515 հարցվածներ: 2008թ. հարցվածների թիվը կազմել է 1549:

Սխալի թույլատրելի սահմանը՝ 2.5%՝ 95% վստահության միջակայքում:

Ընտրանքի տարածքային ընդգրկումն ըստ բնակավայրի տիպի և մարզերի.

Բնակավայր	**2009թ.**	**2008թ.**
Երևան	528	540
Այլ քաղաքներ	475	509
Գյուղական վայրեր	512	500

Մարզ	**2009**	**2008**
Արագածոտն	72	66
Արարատ	121	117
Արմավիր	111	124
Գեղարքունիք	93	99
Կոտայք	140	143
Լոռի	155	156
Շիրակ	131	136
Սյունիք	72	73
Վայոց Ձոր	24	29
Տավուշ	68	66
Երևան	528	540

Տվյալների հավաքագրման աշխատանքների հիմնական ժամանակահատվածը՝ 2009թ. հոկտեմբերի 14-ից մինչև նոյեմբերի 8-ը:

Ընտրանքի մեթոդը՝ բազմաստիճան քլաստերային ընտրանք՝ նախապես բաժանելով ըստ քաղաքային, գյուղական վայրերի և մարզերի:

Ընտրանքի շրջանակը կամ գլխավոր համակցությունը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված ֆիզիկական անձ բաժանորդների հասցեների ցուցակները: Ընտրանքը կազմավորելու քառաստիճան մոտեցումն իրականացվել է հետևյալ քայլերի միջոցով:

- ✓ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի մասնաճյուղերը խմբավորվել են ըստ մարզերի, ընտրանքը համամասնաբար բաշխվել է ըստ մարզերի և ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի:

- ✓ Մարզերի ներսում նախնական ընտրանքային միավորների կամ քլասթերների ձևավորում (դրանք միջինում ընդգրկել են 500 տնային տնտեսություն, ինչը հաճախ համապատասխանել է միևնույն ենթակայանից էլեկտրամատակարարում ստացող տնային տնտեսությունների թվին) և պատահական ընտրանք:
- ✓ Նախնական ընտրանքային միավորների սահմաններում տնային տնտեսությունների ընտրությունը նույնպես կատարվել է պատահականության մեթոդով:
- ✓ Տնային տնտեսությունում հարցվողի ընտրությունը կատարվել է առաջիկա ծննդյան օրվա մեթոդով:

Էմպիրիկ տվյալների հավաքագրման մեթոդը՝ դեմ առ դեմ հարցազրույց տնային տնտեսության կացարանում՝ թուղթ և գրիչի օգնությամբ:

Կշիռների մասին. տվյալների հավաքագրումից հետո, իրականացված ընտրանքը նպատակային բնակչության պարամետրերին համապատասխանեցնելու համար, հաշվարկվել են կշիռներ ըստ մարզի, տարիքի և սեռի: Ընտրանքով ձևավորված նախնական կշիռները ճշգրտվել են հիմք ընդունելով չափահաս բնակչության կազմի վերաբերյալ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալներն ըստ մարզերի, տարիքի և սեռի (01.01.2009 դրությամբ), ինչպես նաև հարցմանը մասնակցելուց հրաժարումների մակարդակն՝ ըստ քլաստերների:

Տվյալների որակի լրացուցիչ, անուղղակի գնահատականներ. հարցազրուցավարների կողմից հարցազրույցի ավարտից հետո՝ դրա ընթացքի և հարցվածի վերաբերյալ արված նշումները թույլ են տվել պարզել, որ.

- ✓ հարցվածների 78.3 տոկոսը իրազեկ է եղել իրեն տրվող հարցերի ավելի քան 60 տոկոսին,
- ✓ հարցվածների միայն 6 տոկոսն են իրենց պատասխաններում ոչ անկեղծ թվացել,
- ✓ հարցվածների 55.4 տոկոսն ընդհանրապես որևէ դժվարություն չի ունեցել հարցերին պատասխանելու ժամանակ,
- ✓ հարցվածների 73.9 տոկոսը կամ պարզաբանումներ բնավ չի խնդրել հարցերի էությունն վերաբերյալ կամ դա արել է հարցերի ոչ ավելի, քան 20 տոկոսի դեպքում:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Դիտողություն. այս գլխում ձեռնարկությունների և տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները համեմատելիս, եթե այլ նշում չկա, խոսքը վերաբերում է 2009թ. տնային տնտեսությունների կարծիքի ուսումնասիրությանը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ձեռնարկություններում հարցվածները բավարարված չեն Հայաստանի տնտեսական իրավիճակով. մեծամասնությունը գնահատել է այն կամ «որոշակիորեն վատ» կամ «շատ վատ»: Որպես Հայաստանում բիզնեսի զարգացման հիմնական խոչընդոտ նշվել են, նախ, մենաշնորհային երևույթները, այնուհետև՝ կոռուպցիան և ֆինանսական ու տնտեսական ճգնաժամը: Հարցվածների հստակ մեծամասնությունն ասել է, որ պատրաստ է վճարել բիզնեսի զարգացման խոչընդոտները վերացնելու համար, ըստ որում, 66 տոկոսը՝ հատկապես կոռուպցիայի վերացման համար:

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՎԱՐԱՐՎԱԾ ՉԷ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ

Հարցված գործարարների գնահատականը Հայաստանում տնտեսական իրավիճակի վերաբերյալ հոռետեսական է. Նրանց 32 տոկոսը կարծում է, որ իրավիճակը «շատ վատ» է, 47 տոկոսը՝ «ավելի շուտ վատ» է, մինչդեռ միայն 20 տոկոսն է ասել, որ այն «ավելի շուտ լավ է» (Գծապատկեր 21): Ձեռնարկության չափը (ըստ առկա աշխատողների թվաքանակի) որևէ ազդեցություն չունի տնտեսական իրավիճակի ընկալման վրա: Տնտեսական իրավիճակի գնահատականները տարբերվում են ըստ ձեռնարկության գործունեության հիմնական ոլորտի: Արդյունաբերության և հանքային ոլորտի ձեռնարկություններում հարցվածները տնտեսական վիճակը փոքր-ինչ ավելի լավ են որակում (1-ից՝ «շատ լավ» մինչև 4՝ «շատ վատ» սանդղակով գնահատելիս միջին գնահատականն այստեղ կազմել է 2,9 միավոր), քան ծառայությունների ոլորտում և առևտրում (3,2 և 3,1՝ համապատասխանաբար):

Գծապատկեր 21. Հայաստանի ներկա տնտեսական իրավիճակի գնահատականը



Մարդկանց մտահոգություններում Հայաստանի ամենալուրջ հիմնախնդիրների շարքում առաջատարը գործազրկությունն է, որը ետին պլան է մղում նույնիսկ կոռուպցիան: Թե՛ ձեռնարկություններում, և թե՛ տնային տնտեսություններում հարցվածներն այդ հիմնախնդիրների մասին գրեթե միակարծիք են և մատնանշում են գործազրկությունը որպես երկրի առջև ներկայումս ծառացած ամենալուրջ խնդիրը: Ի տարբերություն բնակչության,

ձեռնարկությունների հետազոտությամբ որպես երկրորդ հիմնախնդիր են նշվել ընդհանուր տնտեսական խնդիրները (տնային տնտեսություններում հարցմամբ այն կարևորությամբ երրորդն է համարվել): Կոռուպցիան և աղքատությունը գնահատվել են հավասարապես կարևոր և զբաղեցրել երրորդ տեղը (Գծապատկեր 22): Պետք է նշել, որ գործարարների համար կոռուպցիան խնդիրների շարքում ավելի բարձր տեղ է զբաղեցնում, քան բնակչության կողմից տրված դասակարգման շարքում. ըստ 2009 թվականի տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների, տնտեսական բնույթի խնդիրների փնջից հետո այն հինգերորդ տեղն է զբաղեցրել:

Գծապատկեր 22. Հայաստանի առջև ներկայումս ծառացած ամենալուրջ խնդիրները (երեք պատասխանի հնարավորություն)



ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԸ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ԵՆ

Գործարար միջավայրի վրա ազդող հնարավոր գործոնների ցանկում ընդգրկելով կոռուպցիան, գործարարներին առաջադրվել է գնահատել դրանց ազդեցությունը 1-ից (խոչընդոտ չէ) մինչև 7 (շատ լուրջ խոչընդոտ է) սանդղակով: Հարցված գործարարների պատասխանները ցույց են տալիս, որ Հայաստանում բիզնեսի զարգացմանն առավելապես խոչընդոտում են մենաշնորհները (5.9 միջին գնահատական), այնուհետև՝ կոռուպցիան, ֆինանսատնտեսական ճգնաժամը (5.7-ական բալ), հարկային օրենսդրության հակասականությունը և արագ փոփոխվելը, ինչպես նաև անկայուն տնտեսական

քաղաքականությունը: Քիչ նշանակալի (2.6 բալ) խոչընդոտ են համարվել ընկերություն հիմնելու օրենքով նախատեսված ընթացակարգերը:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված են հարցվածների պատասխաններն ըստ Հայաստանում բիզնեսի զարգացմանը խոչընդոտող մի շարք գործոնների: Մենաշնորհի երևույթը որպես բիզնեսի զարգացման շատ լուրջ խոչընդոտ է նշել հարցվածների 61 տոկոսը, իսկ կոռուպցիոն երևույթներն այդպես է որակել նրանց կեսը (Գծապատկեր 23):

Գծապատկեր 23. Հայաստանում բիզնեսի զարգացման խոչընդոտները



Կրկին, ձեռնարկությունների չափը գրեթե չի ազդում, իսկ ձեռնարկության գործունեության ոլորտն ազդում է կոռուպցիայի՝ որպես գործարարության զարգացման խոչընդոտի, ընկալումների վրա: Ծառայությունների ոլորտի ձեռնարկություններում կոռուպցիան համարվել է շատ լուրջ խոչընդոտ (միջին գնահատականը՝ 6.1), արդյունաբերությունում և հանքային ոլորտում փոքր-ինչ սակավ խոչընդոտ (միջինը՝ 5.4), իսկ առևտրում՝ այդ որակումների մեջտեղներում (միջինը՝ 5.9):

ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ Է ՎՃԱՐԵԼ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հարցվածների 71 տոկոսը պատրաստակամություն է հայտնել վճարելու իրենց ընկերության եկամտի որոշ մասը՝ բիզնեսի զարգացման հիմնական խոչընդոտները վերացնելու համար: Հարցվածների մոտ մեկ հինգերորդը (22 տոկոսը) ասել է, որ բիզնես միջավայրի ամենակարևոր խոչընդոտը վերացնելու համար կվճարի ընկերության ամսական եկամտի ավելի քան 10 տոկոսը: Հատկապես կոռուպցիան վերացնելու համար ընկերության եկամտից ինչ-որ չափով տալու պատրաստակամություն են հայտնել հարցվածների 66 տոկոսը:

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԵՎ ԴՐԱ ՏԱՐԲԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Բոլոր հարցվածներն էլ կարծում են, որ կոռուպցիան Հայաստանում լուրջ հիմնախնդիր և սովորական երևույթ է: Գործարարների մեկ երրորդը համարում է, որ կոռուպցիան հնարավոր է «էականորեն» նվազեցնել: Ընդհանուր առմամբ, սակայն, հարցվածների մեծամասնությունն ասել է, որ այն հնարավոր չէ նվազեցնել կամ կարելի է նվազեցնել որոշ չափով: Ավելին, հարցվածների մոտավորապես կեսն ասել է, որ կոռուպցիայի մակարդակը 2008թ. համեմատ առանձնապես չի փոխվել:

Հարցվածների մեծամասնությունն ասել է, որ կոռուպցիան վերևից է գալիս: Հարցվածների կեսից ավելին, օրինակ, համաձայն են, որ առավել կոռումպացված են բարձրաստիճան պետական պաշտոնյաները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընկալվում է որպես ամենակոռումպացված հաստատությունը, մինչդեռ կոմունալ ծառայությունների հատվածը՝ ամենաքիչ կոռումպացվածը: Հարցվածների մեծամասնությունը համարում է, որ կաշառք տալն արդյունավետ է խնդիրներ լուծելու կամ ծառայություններ ստանալու համար: Սակայն, գործարարները նաև նշել են, որ կաշառք տալը մեծ ազդեցություն ունի բիզնեսի միջավայրի վրա:

Հարցվածների զգալի մասն ասել է, որ ոչինչ չի կարող անել Հայաստանում կոռուպցիան նվազեցնելու համար, մինչդեռ մեկ երրորդը կարծում է, որ կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար անձամբ կարող էր ձեռնպահ մնալ կաշառք տալուց: Հայաստանում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար հարցվածները առաջարկել են խստացնել պատիժները կոռուպցիոն հանցագործությունների համար:[9]

Կառավարությունը և Ազգային ժողովը համարվում են ամենահարմար մարմինները, որ պետք է մշակեն և իրագործեն հակակոռուպցիոն ռազմավարությունը, գլխավորեն հակակոռուպցիոն պայքարը: Սակայն, կոռուպցիայի դեմ կառավարության կողմից

[9] Կոռուպցիայի դեմ պայքարելու քայլերի վերաբերյալ բաց հարցին տրվել են զանազան՝ ներառյալ «տույժերի խստացում» ու «մահապատիժ» պատասխանները:

իրականացվող պայքարի արդյունավետության գնահատականները ցույց են տալիս, որ հարցվածներն, ընդհանուր առմամբ, բավականին տարակուսանք ունեն:

Ձեռնարկությունների հետազոտությամբ հարցվածների իրազեկությունը հակակոռուպցիոն ՀԿ-ների մասին ցածր է, և նրանց միայն մեկ երրորդն է ընդունում, որ ՀԿ-ները կարող են պայքարել կոռուպցիայի դեմ:

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌՕՐԵԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ Է ԵՎ ԴՐԱ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ԴԺՎԱՐ ԿԼԻՆԻ

Կոռուպցիան, որպես Հայաստանում լուրջ խնդիր, գրեթե նույն կերպ են կարևորել ձեռնարկություններում և տնային տնտեսություններում հարցվածները (տես՝ Գծապատկեր 24): Ձեռնարկությունների հետազոտությամբ հարցվածների 55 տոկոսը (բնակչության 59 տոկոսի համեմատ) կոռուպցիան որակել է որպես շատ լուրջ խնդիր, իսկ 36 տոկոսն այն համարել է բավական լուրջ խնդիր (բնակչության՝ 25 տոկոսի համեմատ, Գծապատկեր 25):

Գծապատկեր 24. Ձեր կարծիքով, Հայաստանում կոռուպցիան որքանո՞վ է լուրջ խնդիր



Կոռուպցիան Հայաստանում բնական երևույթ համարելուն ավելի հակված են ձեռնարկությունների, քան տնային տնտեսությունների հետազոտությամբ հարցվածները: Ձեռնարկություններում հարցվածների 72 տոկոսը լիովին կամ մասամբ համամիտ է, որ կոռուպցիան Հայաստանում սովորական երևույթ է (Գծապատկեր 25):

Գծապատկեր 25. Համամի՞տ եք արդյոք, որ կոռուպցիան Հայաստանում բնական երևույթ է



Այդուհանդերձ, շատերը հնարավոր են համարում դրական փոփոխությունները: Ձեռնարկություններում հարցվածների 5 տոկոսը կարծում է, որ կոռուպցիան Հայաստանում կարող է լիովին վերացվել, իսկ 36 տոկոսը հնարավոր է տեսնում դրա էականորեն կրճատումը: Այս առումով, ընդհանուր բնակչությունն ավելի հոռետես է. տնային տնտեսություններում հարցվածների միայն 15 տոկոսն է կարծում, որ կոռուպցիան կարող է կրճատվել կամ լիովին վերացվել (Գծապատկեր 26):

Գծապատկեր 26. Կարող է արդյո՞ք կոռուպցիան Հայաստանում նվազել



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԱՄԵՄԱՏ ԱՆՓՈՓՈԽ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ

Ձեռնարկություններում 2009թ. հարցվածների մոտ 50 տոկոսը հավատացած է, որ կոռուպցիայի մակարդակը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ: Գործարարների միայն 23 տոկոսն է դրական փոփոխություններ նկատել՝ ասելով, որ կոռուպցիայի մակարդակը Հայաստանում 2008թ. համեմատ որոշ չափով կամ էականորեն ավելի ցածր է (Գծապատկեր 27):

Գծապատկեր 27. Կոռուպցիայի մակարդակը Հայաստանում նախորդ տարվա համեմատ



Գործարարների հետազոտությամբ բոլոր հարցվածների 46 տոկոսը պահանջվող կաշառքի մեծության որևէ փոփոխություն չի տեսնում՝ նախորդ տարվա համեմատ, իսկ 38 տոկոսը կարծում է, որ հարցվող կաշառքի մեծությունն աճել է:

Հարցվածներին խնդրել էին գնահատել վերջին 24 ամսվա ընթացքում կոռուպցիայի մակարդակի փոփոխությունները բարձր մակարդակում (քաղաքական կոռուպցիա, կոռուպցիա կառավարությունում և խոշոր կաշառքներ) և ցածր մակարդակում (բյուրոկրատական-վարչական կոռուպցիա՝ ստորին օղակների պաշտոնյաների ներգրավվածությամբ): Հարցվածների մեծ մասը երկու մակարդակներում էլ այն համարել է գրեթե անփոփոխ (Գծապատկեր 28):

Գծապատկեր 28. Տարբեր մակարդակներում կոռուպցիայի փոփոխությունը վերջին 24 ամսվա ընթացքում



ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԼԱՅՆՈՐԵՆ ՏԱՐԱԾՎԱԾ Է ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ձեռնարկություններում հարցվածների 48 տոկոսը նշել է, որ կոռուպցիան առավել տարածված է բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում, իսկ 28 տոկոսը՝ որ այն առավել ցայտուն է միջին օղակի պետական պաշտոնյաների շրջանում, և միայն 6 տոկոսն է համարել, որ կոռուպցիան առավել լայն է տարածված ցածրաստիճան պաշտոնյաների շրջանում (Գծապատկեր 29):

Գծապատկեր 29. Կոռուպցիայի տարածվածությունը բարձրաստիճան, միջին և ցածրաստիճան պաշտոնյաների շրջանում



Հարցվածներին խնդրել են գնահատել կոռուպցիան մի շարք հաստատություններում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և ընտրական գործընթացների համար պատասխանատու կառույցները, քրեակատարողական հիմնարկները և դատարանները գնահատվել են որպես երեք ամենակոռումպացված հաստատությունները: Կենտրոնական բանկը, Մարդու իրավունքների պաշտպանը և կոմունալ ծառայությունները համարվել են երեք ամենաասակավ կոռումպացված հաստատությունները[10] (Գծապատկեր 30):

Գծապատկեր 30. Հանրային կառույցների և ծառայությունների կոռումպացվածության գնահատականը, միջին արժեք՝ 1-ից (ոչ կոռումպացված) մինչև 7 (լիովին կոռումպացված) սանդղակով



Դատական բարձր իշխանություններին վճարված կաշառքը համարվել է Հայաստանում բիզնես միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող գործոններից մեկը. այդպես են կարծում հարցվածների առնվազն 56 տոկոսը: Հարցվածների 46 տոկոսի կարծիքով բիզնես միջավայրի վրա էապես ազդում են Ազգային ժողովի պատգամավորներին վճարված կաշառքները: Կենտրոնական բանկի պաշտոնյաներին վճարված կաշառքները համեմատաբար սակավ են ազդում գործարար միջավայրի վրա. հարցվածների 28 տոկոսն է հիշատակել այդպիսի ազդեցության մասին (Գծապատկեր 31): Գործարար միջավայրի վրա կոռուպցիայի այս տեսակի ազդեցության ընկալումները տարբեր չափերի կամ ոլորտների ձեռնարկություններում գրեթե

[10] Գործարարների հետազոտությամբ հարցվածներին խնդրել են դասակարգել հաստատությունները 1-ից (ոչ կոռումպացված) մինչև 7 (լիովին կոռումպացված) սանդղակով: Տնային տնտեսությունների հետազոտությունում այս հարցի դասակարգումը տրվում էր 1-ից (լիովին կոռումպացված) 4 (բոլորովին չկոռումպացված) սանդղակով:

չեն տարբերվում: Միակ բացառությունը, թերևս, համեմատաբար խոշոր (20 և ավելի աշխատող ունեցող) ձեռնարկություններն են. դրանցում հարցվածները տեղական իշխանություններին տրված կաշառքների ազդեցությունը գործարար միջավայրի վրա այնքան էլ զգալի չեն համարում (1-7 սանդղակով այդ ազդեցությունը միջինում գնահատվել է 3,2, մինչդեռ փոքր և միջին ձեռնարկություններում՝ 4,1):

Գծապատկեր 31. Հայտնի է, որ տարբեր դերակատարներ և մասնավոր խմբեր որոշ երկրներում օգտագործում են կաշառքները որպես պետական կառույցների վրա ճնշում գործադրելու և իրենց շահերը առաջ տանելու միջոց: Հայաստանում գործարար միջավայրի վրա որքանո՞վ են ազդում կաշառքները վճարված …



ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՈՐՊԵՍ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՈՐՈՇԱԿԻ ՄԻՋՈՑ

Կոռուպցիոն վարքի ընկալման տեսանկյունից, ձեռնարկությունների և տնային տնտեսությունների հետազոտությունները գրեթե նույնական են: Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը կարծում է, որ ցանկալի վճիռ ստանալու համար դատավորներին կաշառք վճարելը և վարորդական իրավունքը չառգրավելու համար ոստիկանին գումար առաջարկելը կոռուպցիոն գործողություններ են: Քչերն են ասել, որ հարևանի այգուց ծաղիկ կամ միրգ քաղելը առանց վերջինս թույլտվության կոռուպցիայի դրսևորում է (տես՝ Առաջին բաժին, Աղյուսակ 1), ինչից ակներև է, որ մարդիկ հստակորեն զատում են սխալ վարքը կոռուպցիոն վարքից:

Ընդհանուր առմամբ, ընդունված տեսակետը կարծես թե այն է, որ կոռուպցիայի տարածվածությունը Հայաստանում պայմանավորված է նրանով, որ «գործը գլուխ բերելու համար այլ ճանապարհ չկա»: Հարցվածների մյուս ծանրակշիռ մասը կարծում է, որ կոռուպցիայի հիմնական դրդապատճառը գործընթացներն արագացնելն է (Աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Կոռուպցիայի հիմնական դրդապատճառները («այո« պատասխանների բաժինը, %)

	Ձեռնարկություններ	SS 2009	SS 2008
Խնդիրը լուծելու այլ տարբերակ չկա	70	65	61
Արագացնել որևէ գործընթաց	65	49	46
Խուսափել պատժից/տուգանքից	31	24	20
Խուսափել ավելի բարձր պաշտոնական վճարումներից	21	20	20
Ստանալ արտոնյալ վերաբերմունք	18	12	13
Եկամտի այլընտրանքային աղբյուր ունենալ	14	12	12
Ստանալ պատշաճ վերաբերմունք (ծառայություն)	11	14	13
Վերադասներին «պարտադիր« վճարումների պրակտիկա	10	6	5
Այլ	3	2	1

Կաշառք տալը, ինչպես նաև կոռուպցիայի այլ տեսակները համարվում են ցանկալի արդյունքին հասնելու գործուն ճանապարհներ. ձեռնարկություններում հարցվածների մոտ 60 տոկոսը լիովին կամ որոշ չափով վստահ է, որ պետական պաշտոնյային կաշառելով կհասնի ցանկալի արդյունքի: Տնային տնտեսությունների 2009թ. հետազոտությունը ցույց է տվել, որ կաշառք վճարելու միջոցով ցանկալի արդյունքի հասնելու վստահությունը բնակչության շրջանում փոքր-ինչ ավելի բարձր է (64 տոկոս, Գծապատկեր 32):

Գծապատկեր 32. Պետական պաշտոնյային կաշառք տալու դիմաց ակնկալվող ծառայությունների ստացման որոշակիությունը



ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԱԳԾԵՐ: ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՇԱՌՔ ԿՏԱ, ԲԱՅՑ ՉԻ ՎԵՐՑՆԻ

Հարցված գործարարների գրեթե կեսը (42 տոկոսը) վերջին 12 ամիսների ընթացքում լսել է հանրային ծառայությունների դիմաց կաշառատվության առնվազն մեկ դեպքի մասին: Այն հարցին, թե ինչպես կարձագանքեիք կաշառք վճարելու պահանջին, ձեռնարկություններում հարցվածների 67 տոկոսը պատասխանել է, որ պատրաստ է կաշառք տալ, իսկ 21 տոկոսն ասել

է, որ կաշառք չի տա։[11] Ի պատասխան այն հարցին, թե ինչու կաշառք կտային, հարցվածների ճնշող մեծամասնությունը նշել է, որ խնդիրը լուծելու այլ տարբերակ չի տեսնում (Աղյուսակ 9)։

Աղյուսակ 9. Կաշառք տալու կամ չտալու որոշման պատճառները

	Ձեռնարկություններ	SS 2009	SS 2008
Ինչու՞ կտայիք			
Քանի որ ծառայությունը ստանալու այլ տարբերակ չկա	84	80	76
Քանի որ բոլորը տալիս են	7	10	8
Քանի որ կկարողանայի «բանակցել» ավելի ցածր գումար	6	4	8
Այլ	3	6	7
Ինչու՞ չէիք տա			
Քանի որ դա ինձ համար ընդունելի չէ	67	66	58
Չէի տա և կփորձեի հարցը իրավական ճանապարհով լուծել	18	10	19
Այլ	10	15	14
Քանի որ պատժվելու ռիսկը բարձր է	2	8	5

Այն գործարարները, ովքեր կաշառք չէին տա, հիմնավորել էին իրենց տեսակետն, ասելով, որ նման վարքագիծն անընդունելի են համարում (67 տոկոս), ինչը չի տարբերվում ընդհանուր բնակչության հիմնավորումից։ Ձեռնարկություններում հարցվածների մոտ 18 տոկոսը նշել է, որ կաշառք չի վճարի և կաշխատի խնդիրը լուծել օրինական ճանապարհով։ Միայն երկու տոկոսն է նշել, որ կաշառք չի վճարի, որովհետև վախենում է պատժվելուց։ Թեև ընդհանուր բնակչությունը փոքր-քիչ ավելի բարձր է գնահատել պատժվելու ռիսկը, այնուամենայնիվ, այդ տարբերակը հազվադեպ է նշվել։ Ուշագրավ է, որ թեև հարցվածների մեծամասնությունը պատրաստակամ է կաշառք տալ, նրանց մեծ մասը կհրաժարվեր առաջարկվող կաշառքից (Աղյուսակ 10)։

Աղյուսակ 10. Կաշառք տալու և վերցնելու պատրաստակամությունը

	Այո		Ոչ	
	Ձեռնարկություններ	SS 2009	Ձեռնարկություններ	SS 2009
Կտայի կաշառք	67	53	21	41
Կվերցնեի կաշառք	17	20	72	72

Կաշառք վերցնելու հիմնական դրդապատճառ է համարվել դրամական միջոցների կարիքը։ Եվ' ձեռնարկություններում, և' տնային տնտեսություններում, որպես երկրորդ հիմնական դրդապատճառ հնչել է «քանի որ բոլորն են կաշառք վերցնում» պատասխանը։ Ձեռնարկություններում հարցվածներից յուրաքանչյուր հինգերորդը կաշառք վերցնելու պատրաստակամությունը բացատրում է «մի մասը վերադասին տալու պարտավորվածությամբ»։ Կաշառք վերցնելուց հրաժարվողների մեծամասնության

[11] Մնացածը պատասխանել են «չգիտեմ» կամ հրաժարվել են պատասխանելուց։

(գործարարների 81 տոկոսի և բնակչության 75 տոկոսի) բացատրությունն այն է, որ դա անընդունելի է իրենց համար (Աղյուսակ 11):

Աղյուսակ 11. Կաշառք տալու կամ չտալու որոշման պատճառները

	Ձեռնարկություններ	SS 2009	SS 2008
Ինչու՞ կվերցնեիք			
Քանի որ փողի կարիք ունեմ	35	52	49
Քանի որ բոլորն են վերցնում	32	34	33
Քանի որ պարտավոր եմ մի մասը «վերև» տալ	21	6	7
Իմ արած լավության դիմաց փոխհատուցում է	7	…	…
Այլ	4	7	8
Ինչու՞ չէիք վերցնի			
Քանի որ դա ինձ համար ընդունելի չէ	81	75	73
Քանի որ պատժվելու ռիսկը բարձր է	10	11	11
Չէի վերցնի և կփորձեի հարցին իրավական ընթացք տալ	4	5	6
Այլ	4	7	9
Չունեմ գումար	2	…	…
Անիմաստ է	1	…	…

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՄԲ ՀԱՐՑՎԱԾՆԵՐԸ ԿԿԻՐԱՌԵԻՆ ԱՎԵԼԻ ԽԻՍՏ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

Գործարարներին առաջադրված հարցերից երկուսը նպատակ ունեին բացահայտելու թե կոռուպցիայի դեմ պայքարելու համար նրանք ինչ միջոցներ կձեռնարկեին:

Առաջին՝ «Անձամբ ի՞նչ կանեիք Հայաստանում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար» հարցը փոխառնված էր տնային տնտեսությունների հետազոտությունից: Ձեռնարկություններում հարցվածների 49 տոկոսն ասել է, որ ոչինչ չի կարող անել. հիշենք, որ այդպես էր պատասխանել 2009թ. տնային տնտեսություններում հարցվածների 60 տոկոսը: Երկրորդ ամենից տարածված գործողությունը և' գործարարների, և' բնակչության շրջանում կոռուպցիայից ձեռնպահ մնալն է (համապատասխանաբար՝ 42% և 27%, տե՛ս Գծապատկեր 33):

Գծապատկեր 33. Անձամբ ի՞նչ կարող եք անել կոռուպցիայի դեմ պայքարելու համար (երեք պատասխանի հնարավորություն)



Հաջորդ հարցն ուներ փոքր-ինչ այլ ձևակերպում. «Եթե կոռուպցիայի դեմ պայքարելու իշխանություն ունենայիք, ո՞րը կլիներ Ձեր առաջին քայլը»: Ամենից տարածված պատասխաններն են եղել «ավելի խիստ պատիժը» կոռուպցիոն գործողությունների համար (33%), «օրենքի բարելավումը և կիրարկումը» (27%) և «պետպաշտոնյաների աշխատավարձի բարձրացումը» (23%, տես՝ Գծապատկեր 34): «Ոչինչ չէի անի» պատասխանը հաճախ տրված պատասխանների ցանկում վեցերորդն է:

Գծապատկեր 34. Եթե Դուք Հայաստանում կոռուպցիայի դեմ ինչ-որ ձևով պայքարելու իշխանություն ունենայիք, ո՞րը կլիներ Ձեր առաջին քայլը (երեք պատասխանի հնարավորություն)



«Ավելի խիստ պատիժ»-ը որպես առաջին տարբերակ զարմանալի չէ, քանի որ նախորդ հարցերի պատասխաններից արդեն իսկ ակնհայտ էր, որ հարցվածները պատժի վտանգ չեն զգում:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԳԼԽԱՎՈՐԵԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՋԱՆՔԵՐԸ, ՍԱԿԱՅՆ ԴՐԱՆՔ ԱՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

Հարցվածներին խնդրել էին նշել մինչև երեք հաստատություն, որոնք կարող են գլխավորել և իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությունները: Ձեռնարկությունների հետազոտությամբ հարցվածների զգալի մասի կարծիքով կոռուպցիայի

դեմ պայքարի ռազմավարությունը պետք է մշակեն Կառավարությունը[12] կամ Ազգային ժողովը (Գծապատկեր 35): Նկատենք, որ եթե մեկտեղենք «ՀՀ Նախագահը» և «ՀՀ Նախագահի աշխատակազմը» պատասխանները, ապա այդ տարբերակը կզբաղեցնի երկրորդը հորիզոնականը:

Գծապատկեր 35. Նշեք 3 կազմակերպություն, որոնք կարող են մշակել/իրագործել կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությունները (երեք պատասխանի հնարավորություն)



Հարցված գործարարների ուղիղ կեսը տեղյակ է ՀՀ Կառավարության կողմից իրականացվող առնվազն մեկ հակակոռուպցիոն միջոցառման մասին, ինչն ի համեմատ ընդհանուր բնակչության, տեղեկացվածության կրկնակի անգամ ավելի բարձր ցուցանիշ է: Սակայն կոռուպցիայի դեմ Կառավարության պայքարի արդյունավետության գնահատականը բավականին համեստ է: Ձեռնարկությունների հետազոտությամբ հարցվածների գրեթե 26 տոկոսն այդ պայքարը որակել է «շատ անարդյունավետ», մինչդեռ միայն 5 տոկոսն է կառավարության հակակոռուպցիոն միջոցառումները համարել «շատ արդյունավետ» (Գծապատկեր 36):

[12] Կառավարության կողմից արդեն մշակվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման երկրորդ՝ 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը (http://www.gov.am/am/anticorruption/):

Գծապատկեր 36. ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն պայքարի արդյունավետության գնահատականը



ՀԿ-ՆԵՐԸ ԼԱՎ ՃԱՆԱՉՎԱԾ ՉԵՆ ԵՎ ՔԻՉ ՎՍՏԱՀԵԼԻ ԵՆ

Հասարակական կազմակերպությունների վերաբերյալ իրազեկվածությունը ցածր է ոչ միայն տնային տնտեսություններում, այլ նաև ձեռնարկություններում հարցվածների շրջանում: Հարցված գործարարների միայն 12 տոկոսն է տեղյակ եղել, որ կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող ՀԿ-ներ կան: Ստորև բերվող արդյունքները հիմնված են հենց այդ սակավաթիվ տեղեկացվածների պատասխանների վրա: Առավել հայտնի ՀԿ-ների եռյակում են Թրանսփերենսի ինտերնեյշնլը, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան և Աքիլես հասարակական կազմակերպությունը (Գծապատկեր 37):

Ձեռնարկություններում հարցվածների 37 տոկոսը կիսում է այն կարծիքը, որ ՀԿ-ները կարող են պայքարել Հայաստանում կոռուպցիայի դեմ: Այս հարցում հանրային կարծիքն ավելի նպաստավոր է. տնային տնտեսություններում հարցվածների 47 տոկոսն է կարծում, որ ՀԿ-ները կարող են պայքարել կոռուպցիայի դեմ:

Գծապատկեր 37. Հայաստանում հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող հայտնի ՀԿ-ները (մի քանի պատասխանի հնարավորություն, բաժինը բոլոր պատասխաններում, %)



ՏԵՍԱԿԵՏՆԵՐ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ձեռնարկությունների հետազոտությամբ հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ դատական համակարգը Հայաստանում կառավարվում է ազդեցիկ քաղաքական խմբերի կողմից և սատարում է հարուստներին: Համակարգը չի ընկալվում որպես արդար և վստահարժան: Կոռուպցիոն դեպքերի առնչվելիս՝ որպես դատական ատյաններին չդիմելու հիմնական պատճառ ձեռնարկություններում հարցվածները նշել են «Դատավորների նկատմամբ վստահության պակասը»:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱՆԱՐԴԱՐ ԵՎ ԱՆՎՍՏԱՀԵԼԻ Է

Հարցվածներին ներկայացնելով դատական համակարգի վերաբերյալ ութ ձևակերպում, նրանց խնդրել են արտահայտել իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունն այդ պնդումների հետ: Հարցվածների 25 տոկոսը լիովին համաձայնել է այն պնդման հետ, որ դատական համակարգը «մանիպուլյացիայի է ենթարկվում ազդեցիկ քաղաքական խմբերի կողմից» և «գործում է ի շահ հարուստների»: Այդ պնդմանն առնվազն «ավելի շուտ համաձայն» են հարցվածների 70 տոկոսը: Ավելին, դատական համակարգն ընկալվում է որպես ոչ արդար (63 տոկոսը համաձայնել է այս պնդմանը) և անվստահելի (57 տոկոս, տես՝ Գծապատկեր 38):

Գծապատկեր 38. Համաձայնությունն այն դատողությունների հետ, որ «Դատական համակարգը… »



Դատական համակարգի ընկալումները տարբեր չափի ձեռնարկություններում նույնական են, սակայն տարբերվում են ըստ գործունեության ոլորտների: Եթե միջինացված գնահատականներով դատենք, ապա արդյունաբերության և հանքային ոլորտի ձեռնարկություններում դատական համակարգն ինչ-որ չափով նպաստավոր լույսի ներքո է ընկալվում, ծառայությունների ոլորտում՝ բավական աննպաստ, իսկ առևտրի ձեռնարկություններում՝ այս երկուսի արանքում[13]

Այն հարցին, թե «Վերջին 24 ամսվա ընթացքում եղե՞լ են դեպքեր, երբ պետք էր դիմել դատական համակարգի աջակցությանը, սակայն որոշ պատճառներով որոշել եք ձեռնպահ մնալ». «այո» են պատասխանել միայն 12 տոկոսը: Վերջիններիս ավելի քան 50 տոկոսը նշել է, որ դատական համակարգին չդիմելու որոշման վրա այս կամ այն չափով ազդել է պատճառ «դատավորների նկատմամբ վստահության պակասը»: Դատարան չդիմելու մյուս երկու

[13] Ըստ ձեռնարկությունների գործունեության ոլորտների վիճակագրորեն նշանակալի տարբերություններ են բացահայտվել հետևյալ պնդումներում. «դատական համակարգն անվստահելի է», «դատական համակարգը լիովին հետևում է քաղաքական վերնախավի հրահանգներին» և «դատական համակարգը գործում է հօգուտ հարուստների»: Այս պնդումներից յուրաքանչյուրի համար միջինացված գնահատականն ավելի բարձր է (համաձայնությունն ավելի ընդգծված է) նախ ծառայությունների, ապա՝ առևտրի ոլորտների համար, մինչդեռ արդյունաբերության և հանքային ոլորտի համար դրանք ամենացածրն են: «Դատական համակարգը գործում է հօգուտ հարուստների» պնդման դեպքում վերոհիշյալ տարբերություններն ավելի նկատելի են՝ 5.4, 5.0 և 4.6, համապատասխանաբար:

ամենակարևոր պատճառներ են համարվել «դատավարության ընթացքի երկարատևությունը» և «օրենսդրության բարդ և խճճված լինելը» (Գծապատկեր 39):

Գծապատկեր 39. Դատական համակարգին չդիմելու Ձեր որոշման վրա որքանո՞վ են ազդել հետևյալ պատճառները



Հարցվածների ընկերությունների 57 տոկոսը վերջին 24 ամիսների ընթացքում որևէ լուրջ կոնֆլիկտ չի ունեցել, 31 տոկոսն ունեցել է կոնֆլիկտ, սակայն չի կարողացել լուծել այն, մինչդեռ 12 տոկոսն ունեցել է կոնֆլիկտ և լուծել է այն: Նրանք, ովքեր ունեցել են կոնֆլիկտ, պատասխանել են նաև այն հարցին, թե ինչ կերպ են լուծել այն: Կոնֆլիկտների լուծման առավել տարածված եղանակը հանդիսացել է ընկերների ու գործընկերների միջնորդությունը: Դատարանի միջոցով կոնֆլիկտների լուծումը երկրորդ ամենատարածված պատասխանն է: (Գծապատկեր 40):

Գծապատկեր 40. Ընկերության կոնֆլիկտները լուծելու եղանակները (մի քանի պատասխանի հնարավորություն)



ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԱ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետական հաստատությունների կողմից մատուցվող հանրային ծառայությունների որակը, որ, ընդհանուր առմամբ, միատեսակ է գնահատվել, ավելի բարձր է համարվում Կենտրոնական բանկում: Ձեռնարկություններում հարցվածների մեծամասնությունն ասել է, որ չի հայտնվել այնպիսի իրավիճակում, երբ թղթաբանության համար հարկադրված էր կաշառք վճարել: Հարցվածների մոտ կեսը կարծում է, իրենց ձեռնարկության վարչական անձնակազմը թղթաբանության վրա ծախսում է աշխատաժամանակի վեց տոկոսից պակաս:

ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԱՅԻ ԼՐԱՅՈՒՅԻՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Հարցվածների զգալի մասը՝ 37 տոկոսը, նշել է, որ իրենց ընկերության վարչական անձնակազմը բյուրոկրատիայի հետ առնչվելու վրա միջին հաշվով ծախսում է իր շաբաթական աշխատաժամանակի մինչև 5 տոկոսը (Գծապատկեր 41): Փոքր ձեռնարկություններում ժամանակի այդ ծախսն ավելի փոքր է: Մինչև չորս աշխատող ունեցող ձեռնարկություններում կամ բոլոր ձեռնարկությունների 17 տոկոսում թղթաբանության վրա գրեթե ոչ մի ժամանակ չեն ծախսում, մինչդեռ 5-19 աշխատող ունեցող ձեռնարկություններում այդ ծախսը կազմում է 6 տոկոս, իսկ 20 և ավելի աշխատող ունեցող ձեռնարկություններում՝ 8 տոկոս: Տարբերություններն ակնհայտ են նաև այն ձեռնարկություններում, որտեղ թղթաբանության վրա ծախսվում է վարչական անձնակազմի ժամանակի ավելի քան 11 տոկոսը. այդքան է ժամանակի ծախսը փոքր ձեռնարկությունների 24 տոկոսում, միջին ձեռնարկությունների՝ 39 տոկոսում և խոշորների՝ 45 տոկոսում: Թղթաբանության վրա ծախսվող ժամանակն ըստ ոլորտների գրեթե չի տարբերվում:

Գծապատկեր 41. Պետական բյուրոկրատիայի հետ առնչվելու վրա մասնավոր ընկերությունների վարչական անձնակազմի ծախսած աշխատաժամանակը



Հարցվածների մեծամասնությունը (51 տոկոսը) նշել է, որ վերջին 24 ամիսների ընթացքում պետական բյուրոկրատիայի հետ առնչվելու ժամաքանակը մնացել է նույնը: Հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 71 տոկոսը, նշել է, որ պետական բյուրոկրատիայի հետ առնչվելիս ժամանակի առավել նշանակալից մասը բաժին է ընկնում հարկային մարմիններին:

ԹՂԹԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարցվածները պատասխանել են վերջին 24 ամիսների ընթացքում պետական մարմինների հետ առնչվելիս թղթաբանությանը վերաբերող հարցերի: Նրանք, ովքեր ունեցել են այդպիսի պրակտիկա, գնահատել են այդ թղթաբանության հետ կապված հանրային ծառայության որակը: Գնահատելով 1-ից (շատ ցածր) մինչև 7 (շատ բարձր) սանդղակով՝ տեսնում ենք, որ տարբեր հաստատություններում հանրային ծառայությունների որակի վերաբերյալ հարցվածների տված գնահատականներում էական տարբերություններ չկան: Հանրային ծառայությունների որակն ամենաբարձրն է գնահատվել Կենտրոնական բանկի պարագայում և նվազագույնն է գնահատվել ներմուծման և արտահանման հետ կապված թղթարարության դեպքում (Գծապատկեր 42):

Գծապատկեր 42. Մատուցված հանրային ծառայությունների որակը (միջին բալ, 1 –ը՝ «շատ ցածր», 7 –ը՝ «շատ բարձր»)



Ինչպես երևում է գծապատկերից, նույնիսկ ամենացածր գնահատականը (3.8՝ ներկրման և արտահանման թղթաբանության համար) փոքր-ինչ ավելի է 7 բալանի սանդղակի միջին արժեքից: Ուստի, ընդհանուր առմամբ, հարցվածները կարծես թե գտնում են պետական ծառայությունների հետ կապված իրենց առօրյա գործերը հոգալու ուղիները: Այս կամ այն հաստատության ծառայությունների ցածր որակի համար բողոքներ ներկայացրածների բաժինը հարցվածների ընդհանուր թվում կազմել է մինչև 10 տոկոսը: Որպես չբողոքարկելու հիմնական (կախված հաստատությունից՝ 57-ից մինչև 79 տոկոս) պատճառ նշվել է բողոքարկելու անիմաստ լինելը:

Հարցվածների մեծամասնությունը նշել է, որ չեն առնչվել պետական պաշտոնյաների կողմից որոշակի ոչ պաշտոնական վճարներ անելու ակնարկին կամ պահանջին փաստաթղթեր լրացնելիս կամ հանձնելիս: Հարցվածների 18 տոկոսը նշել է, որ նման դեպքեր համեմատաբար հաճախ են եղել ներմուծման ու արտահանման, բնապահպանական լիցենզավորման (15%) ու փոխադրամիջոցների հաշվառման և գրանցման (10%) կառույցներում:

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

Հետազոտությամբ ընդգրկված ձեռնարկությունների մեծամասնությունը վերջին 24 ամիսներին չի մասնակցել պետական գնումների մրցույթների, տենդերների կամ ուղղակի պայմանագրերի: Դրանց մասնակցած ընկերությունների մեծամասնությունում պետական գնումներից, տենդերներից կամ ուղղակի պայմանագրերից ձևավորվում է ընկերության եկամտի 5 տոկոսից ավելին:

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ, ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻՆ ՍԱԿԱՎ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերջին 24 ամիսների ընթացքում պետական գնումների մրցույթներին մասնակցել են հարցմամբ ընդգրկված ընկերությունների միայն 7 տոկոսը, տենդերներին՝ 13 տոկոսը, և ուղղակի պայմանագրերի կնքմանը՝ 15 տոկոսը:

Հետազոտված ձեռնարկությունների 20 տոկոսում նշել են, որ իրենց ընկերության եկամտի ոչ մի տոկոսը չի գոյանում պետական գնումների մրցութային, տենդերային և ուղղակի պայմանագրերից: Հարցվածների այս խումբը մասնակցություն չի ունեցել նման մրցույթներին: Հարցվածների 21 տոկոսը նշել է, որ իրենց եկամտի ավելին քան 50 տոկոսը գոյանում է նման մրցույթներից ու տենդերներից, ուղղակի պայմանագրերից (Գծապատկեր 43):

Գծապատկեր 43. Ձեր ընկերության եկամտի քանի՞ տոկոսն է գոյանում (գոյացել) պետական գնումների մրցույթներից, ուղղակի պայմանագրերից և/կամ տենդերներից



Ձեռնարկություններում պետական գնումների այս կամ այն մրցույթին և տենդերներին չմասնակցելու վճռի վրա շատ կարևոր ազդեցություն է ունեցել արդար մրցակցության բացակայությունը (Գծապատկեր 44): Այսինքն, արդար մրցակցությունը գործարարների համար որոշում ընդունելու առանցքային գործոն է: Տպավորությունն այնպիսին է, որ գործարարներին ոչ թե մրցակցությունն է մտահոգում, այլ դրա անկողմնակալությունը: Պետական գնումների մրցույթներին ձեռնարկությունների չմասնակցելու ստորև թվարկված պատճառների

նշանակալիությունը նույնական ըստ գործունեության ոլորտների: Սակայն, որոշ տարբերություններ կան փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունների միջև. Ոչ պաշտոնական վճարումները, անկողմնակալ մրցակցության բացակայությունը և առանց մրցակցության մեծարժեք պայմանագրերի ստացման հնարավորությունը ավելի շատ մտահոգիչ է խոշոր, քան միջին և փոքր ձեռնարկություններում: Տարբերություններն առավել ընդգծված են անկողմնակալ մրցակցության բացակայության պարագայում. 1-ից (բնավ չի ազդել) մինչև 7 (էականորեն է ազդել) սանդղակով գնահատելու դեպքում խոշոր ձեռնարկություններում այդ գործոնի ազդեցության միջին գնահատականը կազմել է 5.0, միջին ձեռնարկություններում՝ 4.0, իսկ փոքրերում՝ 3.2:

Գծապատկեր 44. Պետական գնումների մրցույթներին և տենդերներին ընկերության չմասնակցելու վճռի վրա ազդող պատճառների ուժգնությունը



Հարցվածների կողմից մրցութային գործընթացները համեմատաբար արդար (բաց մրցակցություն, ոչ պաշտոնական վճարների բացակայություն, գործընթացների ազնվություն) են համարվել միջազգային կազմակերպություններում և ՀԿ-ներում, մինչդեռ տեղական կառույցներում, օրինակ քաղաքապետարաններում և գյուղապետարաններում դրանք որակվել են որպես համեմատաբար անարդար (Գծապատկեր 45): Կրկին, միջին գնահատականներն օգտագործելով, տեսնում ենք, որ մրցութային գործընթացների արդարության ընկալումը տարբեր է կախված մրցույթն անցկացնող հաստատության տիպից (մասնավոր ընկերություն, պետական ազգային ձեռնարկություն, հասարակական կազմակերպություններ, միջազգային կարույցներ): Ըստ գործունեության ոլորտների առավել խիստ են գնահատականներն առևտրում, այնուհետև՝ ծառայությունների ոլորտում, մինչդեռ արդյունաբերության և հանքային ոլորտում մրցույթները սակավ անարդար են որակվել: Այսպես, պետական ազգային ձեռնարկությունների

կողմից անցկացված մրցույթների արդարությանն առևտրի ոլորտում տվել են 4.9 միավոր միջին գնահատականը (1-ից՝ լիովին արդար մինչև 7՝ լիովին անարդար սանդղակով), ծառայությունների ոլորտում՝ 4.5, իսկ արդյունաբերության և հանքային ոլորտում՝ 4.1 գնահատականը:

Գծապատկեր 45. Մրցութային գործընթացների արդարությունը հետևյալ հաստատություններում



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրանքի չափը՝ 400 մասնավոր ձեռնարկություն

Սխալի թույլատրելի սահմանը՝ ± 4.88%՝ 95% վստահության միջակայքում:

Ընտրանքի տարածքային ընդգրկումն ըստ բնակավայրի տիպի և մարզերի.

Բնակավայր

Երևան	227
Այլ քաղաքներ	129
Գյուղական վայրեր	44

Մարզ

Արագածոտն	15
Արարատ	20
Արմավիր	15
Գեղարքունիք	13
Կոտայք	36
Լոռի	19
Շիրակ	20
Սյունիք	18
Վայոց Ձոր	8
Տավուշ	9
Երևան	227

Տվյալների հավաքագրման աշխատանքների հիմնական ժամանակահատվածը՝ 2009թ. դեկտեմբերի 18-ից մինչև 2010թ. հունվարի 30-ը:

Ընտրանքի մեթոդը՝ պարզ պատահական ընտրանք:

Ընտրանքի շրջանակը՝ մասնավոր կազմակերպությունների ցանկ՝ կազմված Հայաստանի պետական ռեգիստրի, ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և «Սփյուռ» գործարար տեղեկատուի բազաներում գրանցված տվյալների հիման վրա: Մոտ 25 հազար ընկերությունների ցանկից պատահականորեն ընտրվել են 400-ը՝ որպես հիմնական միավորներ, որոնցից յուրաքանչյուրի համար ընտրվել է մեկ պահուստային համարժեք (տեղավայրի, գործունեության ոլորտի և աշխատողների թվի տեսանկյունից) միավոր:

Էմպիրիկ տվյալների հավաքման մեթոդը՝ դեմ առ դեմ հարցազրույց ընկերության ղեկավարի կամ վերին օղակի այլ պաշտոնատարի (ղեկավարի անհասանելիության դեպքում) հետ:

Արդյունքների որակի լրացուցիչ, անուղղակի գնահատականներ են համարվել հարցվածի և հարցազրույցի ընթացքի վերաբերյալ հարցազրուցավարների կողմից հարցազրույցի ավարտից հետո արված նշումները: Դրանք ցույց են տվել, որ.

- ✓ հարցվածների 92 տոկոսն իրազեկ է եղել իրեն տրվող հարցերի ավելի քան 60 տոկոսին,
- ✓ հարցվածների միայն 8 տոկոսն են իրենց պատասխաններում թվացել ոչ անկեղծ,
- ✓ հարցվածների 85 տոկոսն ընդհանրապես չի խնդրել որևէ հարցի էության պարզաբանում կամ դա արել է հարցերի մինչև 20 տոկոսի համար: